



ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԱՊՐԻՆԻ  
ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ  
ԲՈՆԱԳԱՆՁՎԱԾ  
ԳՈՒՅՔԻ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԻ  
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



Սույն գեկույցը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

Նյութի բովանդակության պատասխանատուն Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետները:

Փորձագետ՝ Միհրան Բուլղադարյան  
Պատասխանատու խմբագիր՝ Սոնա Այվազյան

ՀՏԴ 343.3  
ԳՄԴ 67.408.12  
Հ 247

Հայաստանում ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի կառավարման  
Հ 247 համակարգի վերլուծություն.- Եր.: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն  
կենտրոն» ՀԿ, 2026.- 39 էջ:

Հետազոտության նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը կատարելագործելու  
կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի  
ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի  
կառավարման կառուցակարգերը:

ՀՏԴ 343.3  
ԳՄԴ 67.408.12

ISBN 978-9939-1-2277-9  
© «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ  
[www.transparency.am](http://www.transparency.am)

Երևան 2026

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |    |
|--|----|
| ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....  | 3  |
| ԱՄՓՈՓԱԳԻՐ .....  | 4  |
| ՆԱԽԱԲԱՆ .....  | 7  |
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....   | 7  |
| ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ .....   | 9  |
| 1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ՓՈՐՁ .....  | 10 |
| 1.1 ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի պահանջները .....   | 10 |
| 1.2 Համաշխարհային բանկի StAR ստանդարտները .....  | 12 |
| 1.3. FATF-ի ստանդարտները .....   | 14 |
| 1.4. Եվրոպական Միության դիրեկտիվները .....   | 15 |
| 1.5 Առանձին երկրների փորձը .....   | 18 |
| 2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ .....                           | 21 |
| 2.1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ու կառավարմանն առնչվող դերակատարները .....                       | 21 |
| 2.2 Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն առնչվող իրավակարգավորումները .....                                | 23 |
| 2.3 Պետական գույքի կառավարմանն առնչվող իրավակարգավորումները ապօրինի գույքի բռնագանձման վարույթի շրջանակում ..... | 26 |
| 2.4 Թափանցիկության և հաշվետվողականության ներկա վիճակը .....  | 33 |
| ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....  | 35 |
| ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....  | 38 |

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

|       |   |
|-------|---|
| ԱԺ    | Ազգային ժողով                               |
| ԱՆ    | Արդարադատության նախարարություն              |
| ԵՄ    | Եվրոպական Միություն                         |
| ՁԼՄ   | Ձանգվածային լրատվության միջոցներ            |
| ՀԿԱԾ  | Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն    |
| ՀՀ    | Հայաստանի Հանրապետություն                   |
| ՄԱԿ   | Միավորված ազգերի կազմակերպություն           |
| ՄԱԿԴԿ | Միավորված ազգերի կոռուպցիայի դեմ կոնվենցիա  |
| ԲՀԿ   | Քաղաքացիական հասարակության կազմակերպություն |
| FATF  | Financial Action Task Force                 |
| StAR  | Stolen Assets Recovery                      |

## ԱՄՓՈՓԱԳԻՐ

Սույն զեկույցը նպատակ ունի աջակցելու Հայաստանի Հանրապետության կառավարությանը կատարելագործել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերը:

Հետազոտության խնդիրն է գնահատել Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի կառավարման իրավական հիմքերը և ընթացակարգերը, դրանց համապատասխանությունը միջազգային ստանդարտներին ու լավագույն փորձին, վերհանել առկա խնդիրներն ու բացերը և ձևավորել առաջարկություններ՝ բարեփոխումների ուղղությամբ:

Վերլուծությունն իրականացվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրության իրավաբանական փորձաքննության, գործառույթների և ընթացակարգերի գնահատման և միջազգային ստանդարտների ու փորձի հետ համադրության մեթոդով: Այս նպատակով դիտարկվել են ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, FATF-ի և Համաշխարհային բանկի StAR նախաձեռնության փաստաթղթերը, Եվրոպական Միության դիրեկտիվները, Եվրոպական խորհրդի անդամ և առանձին այլ պետությունների փորձը:

Վերլուծության թիրախում եղել են հետևյալ հիմնական ուղղությունները, որոնք առանձնապես ընդգծվել են միջազգային ստանդարտների ու լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքում ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը, գույքի հաշվառման/գրանցման, պահպանման և օգտագործման ընթացակարգերը, գույքի տնօրինման թափանցիկությունն ու վերահսկելիությունը, սոցիալական նպատակներին ծառայեցումը և հանրային շահի ապահովումը: Այս ուղղություններով վեր են հանվել էական բացեր, որոնք խոչընդոտում են ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի կառավարման արդյունավետությանը և խաթարում են հանրային վստահությունը այս կարևոր հակակոռուպցիոն և արդարադատության հաստատմանը նպատակաուղղված միջոցառման ու համապատասխան պետական կառավարման մարմինների նկատմամբ:

Հետազոտության արդյունքում վերհանված վերոնշյալ և այլ խնդիրների հասցեագրման նպատակով մշակվել են մի շարք առաջարկություններ:

### Ինստիտուցիոնալ շրջանակ

1. Ստեղծել բռնագանձված ակտիվների կառավարման առանձնացված մարմին կամ, առնվազն, առանձնացված ստորաբաժանում Պետական գույքի կառավարման կոմիտեում, որը կմիավորի բռնագանձված/սառեցված ակտիվների հաշվառումը, պահպանումը, գնահատումը, ժամանակավոր և մշտական տնօրինումը:
2. Մասնագիտացված մարմնի կամ ստորաբաժանման, ինչպես նաև մասնագիտացված հավատարմագրային կառավարիչների համար ստեղծել իրավական բազա, նաև ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսով, վերապատրաստման ծրագրերով, մեթոդական ուղեցույցներով:

3. Հիմնել «Ակտիվների վերականգնման հատուկ ֆոնդ», այն է՝ իրացումից ստացված եկամուտների առանձնացված ֆոնդ կառավարման ծախսերի, պահպանման, ապահովագրության, կարողությունների զարգացման ֆինանսավորման համար:

#### **Կառավարման ընթացակարգեր**

4. Ներդնել «խելամիտ բռնագանձման» (smart confiscation) չափորոշիչներ՝ նախատեսելով, որ ապահովման միջոց կամ բռնագանձում կիրառելուց առաջ իրականացվի ակտիվի ամբողջական գնահատում՝ ներառյալ դրա արժեքը, պահպանման ծախսերը, ինչպես նաև իրավական և օպերացիոն ռիսկերը, ինչն անհրաժեշտ է զրոյական կամ բացասական արժեք ունեցող ակտիվների բռնագանձումը բացառելու և պետական ռեսուրսները արդյունավետ օգտագործելու համար:
5. Սահմանել «արագ արձագանքման» ընթացակարգ (interlocutory sale fast-track), այսինքն՝ արագ իրացման հատուկ ռեժիմ արագ արժեզրկվող/ծախսատար ակտիվների համար (ավտոմեքենա, էլեկտրոնիկա, կենդանի ակտիվներ, փչացող ապրանքներ) դատարանի կողմից նախնական թույլտվության արագացված ընթացակարգով՝ սահմանելով հստակ ժամկետներ, պատասխանատու օղակ, օրինակելի որոշման/պայմանագրի ձևեր:
6. Սահմանել օպերատիվ ժամկետներ, այն է՝ ժամկետային կառավարման կանոններ՝ ապահովման միջոցից մինչև կառավարչի նշանակում, նախնական վաճառքի որոշումից մինչև իրացում, հաշվետվությունից մինչև հրապարակում:
7. Վարել հստակ վիճակագրություն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների շրջանակում բռնագանձված գույքերի և դրամական միջոցների չափի և դրանց հետագա ճակատագրի վերաբերյալ:
8. Բռնագանձված գույքի օտարումը նախկին սեփականատիրոջը կամ նրա հետ փոխկապակցված անձանց թույլատրել միայն որպես վերջին միջոց (ultima ratio)՝ բացառապես այն դեպքում, երբ առկա են բավարար փաստաթղթավորված հիմքեր, որ սպառվել են գույքի հանրային/սոցիալական վերօգտագործման և բաց մրցակցային աճուրդով իրացման բոլոր իրական հնարավորությունները, իրականացվել է շահառուի ու փոխկապակցվածության ստուգում և ապահովվել է ուժեղացված թափանցիկություն և անկախ վերահսկողություն:

#### **Թափանցիկություն և հաշվետվողականություն**

9. Սահմանել տարեկան և կիսամյակային հաշվետվողականության համակարգ:
10. Գործարկել բաց տվյալների/հաշվետվությունների պորտալ, որը կներառի «ակտիվների քարտեզ» իրական ժամանակով, որում կարտացոլվեն գույքի կատեգորիաները, արժեքները, պահպանման ծախսերը, միջանկյալ որոշումները, իրացումների արդյունքները, շահառուները:
11. Սահմանել միջգերատեսչական համագործակցության և միջազգային փոխօգնության գործնական մեխանիզմներ:

12. Սահմանել խորհրդակցական և դիտորդական մեխանիզմներ քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավմամբ ապօրինի գույքի վերականգնման տարբեր գործընթացներում, այդ թվում՝ ռազմավարության և սեկտորային քարտեզի մշակման, գույքի վերադարձի, կառավարման, խոշոր իրացումների և սոցիալական հատկացումների որոշումներում, աճուրդների ու մրցույթների փուլերում ներդրում ունենալու ընթացակարգերով, ինչը կնպաստի գործընթացների թափանցիկությանը և վստահության բարձրացմանը:

### **Հանրային շահի ապահովում**

13. Պետական գույքի կառավարման նպատակներում օրենսդրությամբ որպես ինքնուրույն նպատակներ ամրագրել «բռնագանձված ակտիվների սոցիալական վերօգտագործման առաջնայնություն»-ը և «հանրային շահի գերակայությունը»-ը:

14. Օրենքով սահմանել բռնագանձվող գույքի օգտագործման առաջնահերթ ուղղությունները՝ կրթություն, առողջապահություն, համայնքային ենթակառուցվածքներ, երիտասարդական ծրագրեր, տուժողների աջակցություն և այլն:

15. Սահմանել սոցիալական վերօգտագործման հնարավորություն, մեթոդաբանություն և գնահատման չափանիշների համակարգ, որը թույլ կտա փաստարկված կերպով, պահպանման ծախսերի, արժեքի պահպանման, ռիսկերի և ակնկալվող սոցիալական ազդեցության համադրությամբ որոշել՝ տվյալ ակտիվը ենթակա է սոցիալական օգտագործման, թե՛ օտարման:

16. Սահմանել սոցիալական վերօգտագործման հատուկ ռեժիմ, օրինակ՝ ուղիղ հատկացում կամ արտոնյալ վարձակալություն համայնքներին, կրթական-առողջապահական հաստատություններին և հասարակական կազմակերպություններին՝ մրցութային, բայց ոչ աճուրդային ընթացակարգով:

17. Սոցիալական վերօգտագործման անհնարինության պարագայում օտարման մեթոդն ընտրելու դեպքում նախատեսել օտարումից ստացված դրամական միջոցների նպատակային ուղղորդում դեպի հանրային շահի ապահովմանն ուղղված ծրագրեր՝ բացառելով ստացված գումարի լուծվելն ընդհանուր բյուջետային հոսքի մեջ և ապահովելով հանրային վերադարձի տրամաբանությունը:

18. Կազմել ոլորտային քարտեզ (sector mapping) պետական կամ համայնքային մարմինների կողմից կարիքների նախնական վերհանման ու ամրագրման մեխանիզմներով՝ ուղղորդելու սոցիալական վերօգտագործումը և հանրային շահի ապահովումը:

## ՆԱԽԱԲԱՆ

2020 թվականից Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման համակարգը, որը ներկայում հանդիսանում է հակակոռուպցիոն քաղաքականության կարևորագույն մաս:

ՀՀ կառավարության 2023-2026 թվականների հակակոռուպցիոն ռազմավարությամբ նախատեսված է կատարելագործել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերը:

Սույն հետազոտությունը նպատակ ունի աջակցելու ՀՀ կառավարությանն իրականացնել տվյալ միջոցառումը՝ հիմք ընդունելով միջազգային ստանդարտներն ու փորձը և իրավունքի գերակայության սկզբունքները:

Ակնկալվում է, որ հետազոտության արդյունքում ներկայացված քաղաքականության առաջարկների հասցեատերերը, մասնավորապես՝ ՀՀ Ազգային ժողովը և ՀՀ կառավարությունը, պատշաճ ընթացք կտան առաջարկներին՝ խթանելու համակարգի արդյունավետությունը:

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2020 թվականի ապրիլի 16-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը,<sup>1</sup> իսկ 2020 թվականի սեպտեմբերի 3-ին ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծվեց համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը՝ Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը:<sup>2</sup> Այսպիսով՝ ՀՀ-ում փաստացի մեկնարկեց ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի կիրառումը:

Միջազգային փորձում առանձնացվում է ապօրինի ակտիվների բռնագանձման չորս հիմնական մոդել՝

1. *Բռնագանձում քրեական վարույթի շրջանակում*, որտեղ գործում է քրեական վարույթ, սակայն մեղադրական դատավճիռը անհնար է (օրինակ՝ անձի մահվան, անձեռնմխելիության, բավարար ապացույցների բացակայության և այլ պատճառներով), և որտեղ հնարավոր է ակտիվների բռնագանձում, եթե հաստատվում է կապը հանցագործության և գույքի ձեռքբերման միջև:
2. *Ընդլայնված բռնագանձում*, որտեղ առկա է մեղադրական դատավճիռ, որը թույլ է տալիս բռնագանձել ակտիվներ՝ անկախ դրանց կոնկրետ կապից հանցագործության հետ:

<sup>1</sup> «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, 16.04.2020, <https://www.arlis.am/hy/acts/142347>

<sup>2</sup> ՀՀ դատախազություն, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը ձևավորվեց. Արթուր Դավթյանը խորհրդակցություն է անցկացրել, <https://www.prosecutor.am/article/1730> (դիտված՝ 10.04.2026)

3. *Քաղաքացիական վերականգնում*, որտեղ դատարանն ընդունում է, որ ավելի հավանական է՝ ակտիվները հանցավոր ծագում ունեն՝ հիմնվելով հավանականության ստանդարտի վրա:
4. *Չբացատրվող (անհիմն) հարստացման հիմք*, որտեղ ապացուցման բեռը դրվում է անձի վրա, եթե վերջինիս օրինական եկամուտները համադրելի չեն ունեցած գույքի ծավալի հետ, և որտեղ հանցավոր գործողության ապացուցումը պարտադիր չէ:

ՀՀ օրենսդրությամբ ներդրված համակարգը հիմնված է հիմնականում վերջին՝ չբացատրվող հարստացման մոտեցման վրա, թեև իրավական ակտերի, իրավակիրառ պրակտիկայի և Սահմանադրական դատարանի մեկնաբանությունների համադրությունը ցույց է տալիս, որ կիրառվում են նաև մյուս մոդելների տարրեր: Միաժամանակ, օրենսդրական կարգավորումներից համարյա դուրս են մնացել բռնագանձվող գույքի կառավարման մի շարք առանցքային հարցեր, մինչդեռ գույքի կառավարումը ապօրինի ակտիվների վերադարձի և հանրային շահի վերականգնման ամբողջական շղթայի անբաժան մաս է:

ՀՀ կառավարության կողմից 2023 թվականի հոկտեմբերի 26-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1871-L որոշման 2-րդ հավելվածի 2.14 գործողությունով նախատեսված է կատարելագործել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և (կամ) բռնագրավված, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների արդյունքում բռնագանձված գույքի կառավարման կառուցակարգերը: Որպես նշված գործողության վերջնականատակ ՀՀ կառավարությունը սահմանել է, որ ռազմավարության ժամկետի ավարտին պետք է ներդրված լինեն կոռուպցիոն հանցագործությունների արդյունքում ստացված, ինչպես նաև ապօրինի ծագում ունեցող բռնագանձված գույքի պատշաճ կառավարման լավագույն փորձը: Միաժամանակ, հարկ է նկատել, որ ռազմավարության մեջ միջանկյալ գործողությունները բավականին ընդհանրական են, չեն նախանշում հստակ ուղեցույցներ, այլ բավարարվում են բացառապես «փորձի ուսումնասիրություն», «օրենսդրական փոփոխությունների հավանության արժանազան» և նմանատիպ այլ ընդհանրական մտքերով: Այսինքն՝ ռազմավարությունից թեև պարզ է, որ Կառավարության կողմից գույքի կառավարման մեխանիզմների լավարկումը սահմանված է որպես ռազմավարական նպատակ, սակայն դրա զարգացման ուղղությունները և ցանկալի միտումներն ու տեսլականը պարզ չեն:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման համակարգի ներդրումից ի վեր՝ մոտ հինգ տարվա ընթացքում, օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի և հաստատված հաշտության համաձայնությունների արդյունքում ՀՀ սեփականություն է դարձել մոտ 4 միլիարդ 200 միլիոն դրամ շուկայական արժեքով 9 միավոր անշարժ գույք, 2 միավոր շարժական գույք և մոտ 1 միլիարդ ՀՀ դրամի չափով գումար:<sup>3</sup> Այս համատեքստում առանձնահատուկ կարևոր և արդիական է պետությանը վերադարձված գույքի և դրամական միջոցների հետագա կառավարումը:

<sup>3</sup> ՀՀ դատախազություն, Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից միայն 2025 թվականին դատարան ներկայացված հայցերով ընդհանուր հայցագինը 35 միլիարդ 993 միլիոն դրամ է, <https://www.prosecutor.am/article/5233> (դիտված՝ 10.04.2026)

Միջազգային ստանդարտները սահմանում են, որ բռնազանձված ակտիվների արդյունավետ օգտագործումը հնարավորինս պետք է ուղղվի հասարակական շահի ապահովմանը, քանի որ դրանց ծագումը, որպես կանոն, կապված է կոռուպցիոն բնույթի հանցագործությունների հետ: Պետությունները պետք է ունենան պարտականություն՝ ապահովելու գույքի վերադարձն ու վերահսկելի կառավարումը և օգտագործելու գույքը պետական կամ համայնքային կարիքների սպասարկման նպատակով և երաշխավորելու գործընթացի թափանցիկությունը, հաշվետվողականությունն ու մասնակցայնությունը:

Սույն հետազոտության խնդիրն է գնահատել Հայաստանի Հանրապետությունում ապօրինի ծագում ունեցող բռնազանձված գույքի կառավարման իրավական հիմքերը և ընթացակարգերը, դրանց համապատասխանությունը միջազգային ստանդարտներին ու լավագույն փորձին, վերհանել առկա խնդիրներն ու բացերը և ձևավորել առաջարկություններ՝ բարեփոխումների ուղղությամբ:

## ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության մեթոդը հիմնված է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձմանն ու կառավարմանն առնչվող ՀՀ օրենսդրության իրավաբանական փորձաքննության, գործառույթների և ընթացակարգերի գնահատման և միջազգային ստանդարտների ու փորձի հետ համադրության վրա:

Ուսումնասիրվել են հետևյալ հիմնական իրավական ակտերը՝

- «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման մասին» ՀՀ օրենքը (2020 թ.),
- «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքը (2014 թ.),
- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (2018 թ.),
- ՀՀ կառավարության առնչվող որոշումները,
- ՀՀ գլխավոր դատախազության և Պետական գույքի կառավարման կոմիտեի հաշվետվությունները:

Տեղեկությունը հավաքագրվել է հետևյալ աղբյուրներից՝

- ՀՀ պաշտոնական իրավական տեղեկատվական հարթակներ ([arlis.am](http://arlis.am), [gov.am](http://gov.am)),
- պետական մարմինների պաշտոնական կայքեր,
- պետական հաշվետվություններ և հանրային ելույթներ՝ հրապարակված մամուլում:

Հետազոտության հիմքում դրվել են թեմային առնչվող միջազգային հիմնական փաստաթղթերը՝

- ՄԱԿ-ի 2003 թվականի հոկտեմբերի 31-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՄԱԿԴԿ),
- FATF-ի փաստաթղթերը՝ ակտիվների կառավարման, վերականգնման և տնօրինման հարցերով,
- Համաշխարհային բանկի StAR նախաձեռնության փաստաթղթերը,
- Եվրոպական Միության դիրեկտիվները,
- Եվրոպական խորհրդի անդամ և առանձին այլ պետությունների փորձը:

Յետազոտության մեջ օգտագործվել է նաև Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի կողմից՝ բռնազանձված ակտիվների կառավարման միջազգային փորձի վերաբերյալ իրականացված հետազոտությունները և կազմակերպված դասընթացների շրջանակներում տրամադրված նյութերը:

Վերլուծությունն իրականացվել է հետևյալ հիմնական ուղղություններով, որոնք առանձնապես ընդգծվել են միջազգային ստանդարտների ու լավագույն փորձի ուսումնասիրության արդյունքում՝

- ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը,
- գույքի հաշվառման/գրանցման, պահպանման և օգտագործման ընթացակարգերը,
- գույքի տնօրինման թափանցիկությունն ու վերահսկելիությունը,
- սոցիալական նպատակներին ծառայեցումը և հանրային շահի ապահովումը:

## 1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐ ԵՎ ՓՈՐՁ

### 1.1 ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի պահանջները

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան (ՄԱԿԴԿ) ակտիվների բռնազանձման և վերականգնման միջազգային ամենաբարձր մակարդակի իրավական հիմքն է, որին միացել են գրեթե բոլոր պետությունները, այդ թվում՝ Հայաստանը:

ՄԱԿԴԿ-ի 51-րդ հոդվածը ակտիվների բռնազանձման և վերադարձի գործընթացը սահմանում է որպես իր հիմնարար սկզբունքներից մեկը՝ դրանում ընդգծելով պետությունների միջև համագործակցության և փոխադարձ աջակցության կարևորությունը: Կոնվենցիայի 53–57-րդ հոդվածներով սահմանվում են գույքի բռնազանձման, վերադարձի և տնօրինման մեխանիզմները, որոնցով նախատեսվում է, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքը պետք է վերադարձվի իր օրինական սեփականատերերին, վնաս կրած պետություններին կամ հանցագործության տուժողերին պետք է վճարվի փոխհատուցում:

ՄԱԿԴԿ-ի 57-րդ հոդվածը հստակ սահմանում է պետությունների պարտավորությունները բռնագրավված գույքի վերադարձի և տնօրինման ոլորտում: Դրա հիմնական դրույթներն են՝

- *Վերադարձի առաջնահերթությունը*. Մասնակից պետությունները պարտավոր են վերադարձնել բռնազանձված ակտիվները նախկին օրինական սեփականատիրոջը կամ պետությանը՝ ըստ անհրաժեշտության և իրենց ներքին օրենսդրությանը համապատասխան (կետ 1):
- *Համագործակցությունը՝ ըստ հարցման*. Մասնակից պետությունները պետք է ունենան օրենսդրական հիմքեր այլ պետության հարցման հիման վրա բռնագրավված գույքը վերադարձնելու համար, եթե ներկայացված է վերջնական դատական ակտ և պահպանված են երրորդ կողմի օրինական իրավունքները (կետ 2):

- *Գույքի վերադարձման պարտավորություն.*
  - Պետական միջոցների հափշտակության դեպքերում (Կոնվենցիայի հոդված 17 և 23), եթե հարցումն արվել է դատական որոշման հիման վրա, պետությունները պարտավոր են վերադարձնել գույքը (կետ 3(ա)):
  - Այլ հանցագործություններից ստացված ակտիվների դեպքում, եթե ապացուցվում է գույքի նկատմամբ իրավունքը կամ վնասը, պետությունները պետք է վերադարձեն դրանք (կետ 3(բ)):
  - Այլ դեպքերում գույքը առաջնահերթության կարգով պետք է վերադարձվի օրինական սեփականատերերին կամ տուժածներին փոխհատուցման նպատակով (կետ 3(գ)):
- *Ծախսերի հատուցման մեխանիզմ.* Երբ պետությունը կրում է զգալի ծախսեր դատավարության կամ հետաքննության ընթացքում՝ կարելի է գույքի վերադարձից հանել այդ ծախսերը (կետ 4):
- *Երկկողմ պայմանագրեր.* Կողմ պետությունները կարող են համաձայնագիր կնքել բռնագրավված գույքի վերջնական տնօրինման վերաբերյալ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները (կետ 5):

Թեև Կոնվենցիան ինքն իրենով չի նշում բռնագանձված գույքի սոցիալական վերօգտագործման նպատակի անհրաժեշտությունը, սակայն դրա հետագա մեկնաբանություններում այդ հարցը դառնում է առանցքային (նշված ինդիքը կքննարկվի հետագոտության հետագա գլուխներում):

ՄԱԿԴԿ-ն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ոչ միայն ակտիվների բռնագանձման և վերադարձի իրավական մեխանիզմներին, այլև դրանց արդյունավետ կառավարման ինստիտուցիոնալ հիմքերին:

1. *Անկախ կառավարման մարմինների ստեղծում.* Կոնվենցիայի 6-րդ հոդվածը պահանջում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն ապահովի կոռուպցիայի կանխարգելման համար հատուկ մարմնի կամ մարմինների առկայությունը և նրանց անհրաժեշտ ինքնուրույնությունը «իր գործառույթներն արդյունավետ և անհարկի ազդեցությունից զերծ կատարելու համար»: Այս դրույթը ձևավորում է որոշակի հիմք նաև ակտիվների կառավարման և վերադարձի գործընթացներում ինստիտուցիոնալ անկախություն ապահովելու համար:
2. *Քազմակողմ համագործակցության միջավայր.* Կոնվենցիայի V գլուխը (հոդվածներ 5 1–59) սահմանում է ակտիվների վերադարձի միջազգային իրավական մեխանիզմները՝ համագործակցության, փոխադարձ իրավական օգնության և պայմանավորվածությունների ձևավորման միջոցով: Մասնավորապես, 55-րդ հոդվածը նախատեսում է միջազգային համագործակցություն բռնագրավման նպատակով, իսկ հոդված 59-ը կոչ է անում մասնակից պետություններին քննարկել «երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր կամ պայմանավորվածություններ կնքելու հնարավորությունը՝ համագործակցության արդյունավետությունը բարձրացնելու համար»:

3. *Չանրային հաշվետվողականության համակարգ.* Կոնվենցիայի 13-րդ հոդվածը պարտադրում է պետություններին ապահովել հանրային մասնակցություն և թափանցիկություն պետական կառավարման և որոշումների ընդունման գործընթացներում՝ նպաստելով պետական մարմինների հաշվետվողականությանն ու հանրային վստահության բարձրացմանն ակտիվների վերադարձի և տնօրինման գործընթացներում:

Այս դրույթների համադրությունը ցույց է տալիս, որ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան ակտիվների վերադարձը դիտում է ոչ միայն իրավական, այլև ինստիտուցիոնալ և հասարակական պատասխանատվության համատեքստում՝ խրախուսելով արդյունավետ, անկախ և հաշվետու կառավարման միջավայրի ձևավորում:

ՄԱԿԴԿ-ն ունի կոնվենցիայի կատարման մոնիտորինգի մեխանիզմ, որի շրջանակում պետությունների կատարողականը գնահատվում է: Գործնականում գնահատման արդյունքները կարող են դառնալ միջազգային գործընկերների և դոնոր կառույցների որոշումների հիմք:

Ըստ էության, ՄԱԿԴԿ-ը դառնում է կենտրոնական առանցքն այն գաղափարի, որ գույքի բռնագանձումն, ի վերջո, ոչ թե պատժիչ, այլ վերականգնողական և սոցիալ-իրավական նշանակություն ունեցող գործընթաց է:

## 1.2 Չամաշխարհային բանկի StAR ստանդարտները

Չամաշխարհային բանկի Գողացված ակտիվների վերականգնման StAR (Stolen Assets Recovery) ստանդարտները գույքի կառավարման վերաբերյալ սահմանել է որոշակի ստանդարտներ, որոնք զետեղված են «Վերադարձված գույքի կառավարում. առանց մեղադրական դատավճռի հիմքով գույքի բռնագանձման լավագույն պրակտիկայի ուղեցույցում»:<sup>4</sup> Դրանք ներառում են՝

- *Բռնագանձման պլանավորման անհրաժեշտությունը.* Արդյունավետ արդյունքը պայմանավորված է ոչ թե միայն բռնագանձման փաստով, այլ նաև բռնագանձման փուլում իրականացված կառավարչական պլանավորմամբ: Պետք է կանխավ գնահատել ակտիվի կառավարման/պահպանման ծախսերը, շուկայական արժեքը և արագ արժեզրկման ռիսկերը, ինչպես նաև իրավական լիազորությունները՝ նախադատական իրացման կամ փոխանցման հնարավորության համար: «Խելամիտ բռնագանձման» սկզբունքը նախատեսում է անարժեք կամ չափազանց ծախսատար ակտիվների կրճատում՝ վարչարարական ծանրաբեռնվածության և արժեքի կորուստների նվազեցմամբ:
- *Արժեքի պահպանման տնտեսական իմպերատիվ.* Չատկապես շարժական և արագ արժեզրկվող ակտիվների (ավտոմեքենաներ, էլեկտրոնիկա և այլն) դեպքում անհրաժեշտ է նախատեսել նախադատական վաճառք (interlocutory sale) կամ այլ

<sup>4</sup> Greenberg Theodore S. et al., Management of Returned Assets: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture, The World Bank, 2009, <https://shorturl.at/W0aSc> (դիտված՝ 10.04.2026)

միջանկյալ միջոցառումներ արժեքի պահպանումն ապահովելու համար: Այդ գործընթացը ենթադրում է արագ գնահատում, պահեստավորման օպտիմալացում և հաշվառման/մշտադիտարկման մեխանիզմներ՝ ծախս/օգուտ հարաբերակցության վերահսկելիության համար:

- *Ինստիտուցիոնալ ենթակառուցվածք և մասնագիտացում.* Ակտիվների արդյունավետ կառավարումը պահանջում է առանձնացված կառույցներ (asset management offices), թվայնացված հաշվառման համակարգեր և ոլորտային մասնագիտացում (օրինակ՝ անշարժ գույքի օպերատորներ, կենդանի ակտիվների պահապաններ, ձեռնարկությունների ժամանակավոր կառավարիչներ): Ուղեցույցը նախապատվություն է տալիս հստակ գործընթացներին, օրինակելի պայմանագրերին և ծառայողների ծառայողական/իրավական պաշտպանությանը անձնակազմի «պատասխանատվության անձնավորման» ռիսկերը կանխելու համար:
- *Ֆինանսական կայունության մեխանիզմներ.* StAR-ը խորհուրդ է տալիս ստեղծել բռնագանձված ակտիվների հատուկ ֆոնդ (asset forfeiture/recovery fund), որտեղ ուղղվում են իրացումից ստացված միջոցները, և որը ծառայեցվում է բացառապես կառավարման, հետաքննությունների աջակցման, ապահովագրման, պահեստավորման, անձնակազմի վերապատրաստման և այլ օժանդակ ծախսերի համար: Խորհուրդ է տրվում «լրացում, ոչ փոխարինում» սկզբունքը՝ կանխելու բյուջեի նվազեցումը ֆոնդի հաշվին: Նաև ակնկալվում է ապահովել անկախ աուդիտ, ծախսերի մանրամասն հրապարակում և շահերի համընկնման կանխարգելիչ սահմանափակումներ:
- *Թափանցիկություն, մասնակցայնություն և սոցիալական վերօգտագործում.* Ուղեցույցները կարևորում են հանրային վերահսկողության և հաշվետվողականության գործիքակազմը՝ բաց տվյալներ ակտիվների ռեեստրի, իրացման արդյունքների, ծախսերի և մուտքերի վերաբերյալ, բազմաշահառու խորհրդակցական ձևաչափեր (քաղաքացիական հասարակության, ՏԻՄ-երի ներգրավմամբ), ինչպես նաև սոցիալական վերօգտագործման հստակ մոդելներ (կրթություն, առողջապահություն, համայնքային ենթակառուցվածքներ)՝ հանրային շահին վերադարձը կյանակազմակերպելու համար:
- *«Ընտրողական բռնագանձման» չափորոշիչներ.* StAR-ի դեպքային ուսումնասիրությունները փաստում են, որ իրավական պարտադրանքով «ամեն ինչ» բռնագանձելու մոտեցումը հանգեցնում է ծախսատար և արժեքագրված գույքային զանգվածի կուտակման: Առաջարկվում է չափորոշիչների ներմուծում՝ (ա) ե՞րբ խուսափել զրոյական/բացասական արժեք ունեցող ակտիվներից, (բ) ե՞րբ իրացնել անհապաղ, և (գ) ե՞րբ կազմակերպել ժամանակավոր մասնագիտացված կառավարում՝ մինչև վերջնական դատական ակտը:
- *Արագ արձագանքման ընթացակարգեր.* Արդյունավետ կառավարման համար պահանջվում են օպերատիվ գործիքներ՝ նախադատական իրացման թույլտվություն, արագացված մրցութային ընթացակարգեր հավատարմագրային կառավարման համար, օրինակելի պայմանագրեր և դատարանների արագ որոշումներ

պահեստավորման/վաճառքի հարցերով: Այս բաղադրիչները նվազեցնում են արժեզրկման և ավելորդ ընթացիկ ծախսերի ռիսկերը:

Այսպիսով՝ StAR-ի մեթոդաբանական ուղեցույցները ցույց են տալիս, որ բռնազանձումը միայն մեկնարկային փուլն է. համակարգի արդյունավետությունն իրականում որոշվում է կառավարման նախապատրաստվածությամբ, ֆինանսական ինքնաբավությամբ, ինստիտուցիոնալ կարողություններով և հրապարակայնությամբ: Առանց այս հիմքերի՝ աճում են արժեքի կորուստները, հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետությունը թուլանում է, և նվազում է հանրային վստահությունը մեխանիզմի նկատմամբ:

### 1.3. FATF-ի ստանդարտները

Գլոբալ մակարդակում փողերի լվացման, տեռորիզմի և զենքի ֆինանսավորման հարցերով զբաղվող ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը՝ FATF-ը (Financial Action Task Force), մշակել է ուղեցույցներ, որոնք ուղղված են այնպիսի համակարգերի ներդրմանը, որոնք հնարավորություն կտան ապահովելու ապօրինի ծագում ունեցող գույքի արդյունավետ կառավարում, դրա վերադարձ և օգտագործում հանրային շահի սպասարկման նպատակով: Առանձին ուշադրություն է դարձվում ակտիվների պահպանման, օպտիմալ տնօրինման և հասարակական վերահսկողության սկզբունքներին՝ որպես ապօրինի գույքը տնտեսական շրջանառությունից հանելու ընդհանուր ռազմավարության բաղադրիչ:

Հանձնարարականներում հստակ շեշտադրված են մի քանի առանցքային ուղղություններ՝

- *Ակտիվների կառավարման և արժեքի պահպանման մեխանիզմներ.* FATF-ը հստակ պահանջում է, որ երկրները ներդնեն արդյունավետ միջոցներ՝ սառեցված, առգրավված կամ բռնագրավված գույքի պահպանման, կառավարման և, անհրաժեշտության դեպքում, օտարման համար: Գույքի արժեքի պահպանման միջոցներն, ըստ նպատակահարմարության, կարող են ներառել միջանկյալ վաճառքի մեխանիզմներ: Այսպիսով՝ ապահովվում է, որ ակտիվները չկորցնեն իրենց շուկայական արժեքը կառավարման ընթացքում, ինչը հատկապես կարևոր է ենթակա օտարման կամ փոխանցման դեպքերում:<sup>5</sup>
- *Ակտիվների վերականգնման ֆոնդերի ստեղծում.* FATF-ը հորդորում է պետություններին դիտարկել ակտիվների վերականգնման հատուկ ֆոնդերի ստեղծումը, որտեղ կհավաքվեն բռնազանձված միջոցները: Նման ֆոնդերը կարող են ուղղվել իրավապահ համակարգի ամրապնդման, կրթության, առողջապահության և այլ հանրային գերակայություն ունեցող ոլորտների ֆինանսավորմանը: Այս մոտեցումը նպաստում է այն ընկալման ձևավորմանը, որ բռնազանձված ակտիվները

<sup>5</sup> FATF, Methodology for Assessing Technical Compliance with the FATF Recommendations and the Effectiveness of AML/CFT Systems, 2023, <https://shorturl.at/FtRcx> (դիտված՝ 10.04.2026)

վերադարձվում են հասարակությանը, ինչը բարձրացնում է վստահությունը իրավական համակարգի նկատմամբ:<sup>6</sup>

- *Բռնագանձման վճիռների կատարում և ակտիվների իրացում*. Երկրները պետք է ապահովեն համապատասխան մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան իրականացնել բռնագանձման վերաբերյալ դատական ակտերը և իրականացնել այդ գույքի առգրավումը կամ փոխարկումը դրամական արժեքի: Այս միջոցները պետք է ուղղվեն ակտիվի ամբողջական կամ մասնակի և մշտական գրկմանը, որը կհանդիսանա արդարադատության վերջնական հաստատումը:
- *Գույքի վերադարձ*. Կարևոր է, որ երկրներն ունենան հստակ մեխանիզմներ բռնագանձված գույքի վերադարձի համար հատկապես այն դեպքերում, երբ գույքը առգրավվել է միջազգային համագործակցության արդյունքում կամ կապված է պետական միջոցների հափշտակության հետ: Այդ մեխանիզմները կարող են ներառել նաև գույքի վերադարձը նախկին օրինական սեփականատերերին միջազգային պայմանավորվածությունների հիման վրա՝ ապահովելով արդարության և իրավական պատշաճ ընթացակարգերի պահպանումը:

#### 1.4. Եվրոպական Միության դիրեկտիվները

Եվրոպական Միությունն ընդունել է մի շարք դիրեկտիվներ՝ ուղղորդելու անդամ պետությունների քաղաքականությունը:

ԵՄ 2014 թվականի ապրիլի 3-ի «Եվրոպական Միությունում հանցագործությունների գործիքների և հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների սառեցման և բռնագանձման մասին» 2014/42 դիրեկտիվը<sup>7</sup> հստակեցնում է գույքի բռնագանձման և կառավարման ոլորտում անդամ պետությունների պարտավորությունները և հանդիսանում է քաղաքական ուղեցույց անդամ պետությունների համար: Այս Դիրեկտիվի 10-րդ հոդվածը սահմանում է անդամ պետությունների պարտականությունները գույքի կառավարման ոլորտում: Ըստ հոդվածի՝

- Անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սառեցված գույքի պատշաճ կառավարման համար, այդ թվում՝ կենտրոնացված կամ մասնագիտացված կառույցների ստեղծում:
- Ջնարավորություն պետք է ստեղծվի գույքի վաճառքի կամ փոխանցման համար, եթե դա անհրաժեշտ է դրա արժեքը պահպանելու կամ կառավարման ծախսերը նվազեցնելու նպատակով:

<sup>6</sup> FATF, Best Practices on Confiscation (Recommendations 4 and 38) and a Framework for Ongoing Work on Asset Recovery, 2012, <https://shorturl.at/gKmbI> (դիտված՝ 10.04.2026)

<sup>7</sup> Directive 2014/42/EU of the European Parliament and of the Council of 3 April 2014 on the freezing and confiscation of instrumentalities and proceeds of crime in the European Union, <https://eur-lex.europa.eu/eli/dir/2014/42/oj/eng> (դիտված՝ 10.04.2026)

- Դիրեկտիվը խրախուսում է բռնագանձված գույքի օգտագործումը հանրային կամ սոցիալական նպատակներով:

Այս դրույթներն ընդգծում են այն սկզբունքը, որ բռնագանձման ինստիտուտի արդյունավետությունն անմիջականորեն պայմանավորված է նաև գույքի հետագա տնօրինման ռազմավարությամբ և ինստիտուցիոնալ լուծումներով:

Շարունակելով համակարգային քաղաքականությունը՝ ուղղված հանցավոր ճանապարհով ստացված ակտիվների հայտնաբերմանը, սառեցմանը, բռնագանձմանը և արդյունավետ կառավարմանը, 2024 թ.-ին ԵՄ-ն ընդունել է իր 2024/1260 դիրեկտիվը, որը փոխարինել է 2014/42 դիրեկտիվին:

Նոր դիրեկտիվը<sup>8</sup> նախատեսում է հետևողական կարգավորումներ գույքի բռնագանձման ամբողջական շղթայի համար՝ սկսած ակտիվների հայտնաբերումից մինչև դրանց սոցիալական վերադարձ: Այն պարտադրում է անդամ պետություններին՝

- ստեղծել գույքի կառավարման մասնագիտացված կամ կենտրոնացված մարմիններ, որոնք պատասխանատու են բռնագանձված և սառեցված ակտիվների պահպանման, գնահատման և տնօրինման համար,
- դարձնել հնարավոր այդ գույքի վաճառքը կամ օգտագործումը նույնիսկ մինչև դատավճիռը, երբ դա անհրաժեշտ է արժեքի պահպանման կամ օգտագործման արդյունավետության համար,
- ձևավորել ընթացակարգեր, որոնց միջոցով բռնագանձված գույքը կարող է օգտագործվել հանրային կամ սոցիալական նպատակներով, օրինակ՝ համայնքային ծրագրեր, կրթական կամ առողջապահական նախաձեռնություններ:

Այս դրույթները փաստորեն համակարգում են բռնագանձման գործընթացը ոչ միայն իրավական, այլ նաև տնտեսական ու սոցիալական տեսանկյունից:

ԵՄ 2024/1260 դիրեկտիվի IV գլուխը սահմանում է գույքի կառավարման հստակ և պարտադիր չափորոշիչներ, որոնք կիրառելի են սառեցված և բռնագանձված ակտիվների ամբողջական ցիկլի համար: Տվյալ գլխում ներառված 20-22-րդ հոդվածները միասին ձևավորում են գույքի ինտեգրված և պրոֆեսիոնալ կառավարում ապահովող մոդել:

#### *Յոթված 20. Գույքի կառավարում և պլանավորում*

- Անդամ պետությունները պարտավոր են ապահովել այնպիսի կառավարման մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս պահպանել սառեցված կամ բռնագանձման ենթակա գույքի արժեքը՝ մինչև դրա վերջնական տնօրինումը:

<sup>8</sup> Directive 2024/1260 of the European Parliament and of the Council of 24 April 2024 on asset recovery and confiscation, <https://eur-lex.europa.eu/eli/dir/2024/1260/oj/eng> (դիտված՝ 10.04.2026)

- Եթե ակտիվը հանդիսանում է գործող կազմակերպություն կամ ձեռնարկություն, ապա անհրաժեշտ է այն կառավարել որպես շարունակական գործունեություն ապահովող միավոր:
- Կառավարումը պետք է հիմնված լինի նախնական գնահատման վրա, որի նպատակն է նվազեցնել ծախսերը և կանխել գույքի արժեզրկումը:
- Սառեցված գույքի կառավարման ծախսերը կարող են որոշ դեպքերում դրվել իրական շահառուների (beneficial owner) վրա:

*Յոթված 21. Միջանկյալ (interlocutory) վաճառք*

- Պետությունները պետք է թույլ տան սառեցված գույքի վաճառքը մինչև դատավճիռ, եթե՝
  - այն փչացող կամ արագ արժեզրկվող է,
  - պահպանման ծախսերը գերազանցում են գույքի արժեքը,
  - պահանջում է հատուկ մասնագիտական կառավարում:
- Ապահովվում է գույքի սեփականատիրոջ իրավունքների պաշտպանություն՝ նախքան վաճառքը՝ բացի անհետացման կամ անհայտության դեպքերից:
- Վաճառքից ստացված եկամուտները պահվում են մինչև բռնագանձման վերջնական որոշումը:

*Յոթված 22. Գույքի կառավարման մարմիններ (Asset Management Offices)*

- Ամեն պետություն պարտավոր է ունենալ գոնե մեկ կառույց (կամ լիազորված մարմին), որը կկատարի սառեցված և բռնագանձված գույքի կառավարման գործառույթներ մինչև դրա վերջնական իրավական տնօրինումը:
- Այդ կառույցի գործառույթներն են՝
  - ապահովել կառավարման արդյունավետությունը՝ անմիջականորեն կամ այլ մարմիններին մասնագիտական աջակցություն տրամադրելով,
  - համագործակցել հետախուզման, սառեցման և բռնագանձման պատասխանատու այլ մարմինների հետ,
  - ապահովել համագործակցություն միջսահմանային գործերով:

Այսպիսով՝ ԵՄ դիրեկտիվն այս դրույթներով առաջարկում է գույքի կառավարման ամբողջական փաթեթ, որի առանցքում են՝

- վաղ փուլից վերահսկելիությունը,
- նախնական գնահատման պարտադիրությունը,
- մասնագիտացված կառավարման մարմինը,
- խաչաձև համագործակցության մեխանիզմները,
- գույքի արժեքի պահպանման և հանրությանը ծառայեցնելու նպատակները:

## 1.5 Առանձին երկրների փորձը

Աշխարհի տարբեր պետություններում գործում են ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման տարբեր մոդելներ: Առկա փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ գույքի բռնագանձումն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ առկա է կառավարման ինստիտուցիոնալ կայացած, իրավական հստակեցված և հանրային վստահության վրա հիմնված համակարգ: Մասնավոր օգտագործումից անցումը հանրային վերաինտեգրմանը (հասարակական կազմակերպություններին, համայնքներին տրամադրում, սոցիալական ձեռնարկատիրություն) համարվում է լավագույն փորձ:

**Ալբանիայում** պետությունը համագործակցում է «Partners Albania»-ի նման հասարակական կազմակերպությունների հետ՝ բռնագանձված գույքը վերածելով ուսումնական կենտրոնների, սոցիալական ձեռնարկատիրական բիզնեսների:<sup>9</sup>

**Գերմանիայում** վերջին տարիներին ուժեղացվել են հանցավոր ծագում ունեցող գույքի բռնագանձման լիազորությունները՝ թույլ տալով դատախազությանը բռնագրավել գույքը նույնիսկ «ապօրինի ծագման» ողջամիտ կասկածի դեպքում: Կան նաև դաշնային կառույցներ նման ակտիվների հաշվառման և տնօրինման համար:<sup>10</sup>

**Իսպանիայում** գործում է ֆոնդային մոդելը, որտեղ բռնագանձված ակտիվները կենտրոնացվում են պետական ֆոնդում, որը վերահսկվում է ֆինանսների նախարարության կողմից: Գումարները բաժանվում են դատարաններին (քննիչ կարիքներ), ներքին գործերի նախարարությանը հակահանցավորության ծրագրերի համար, հասարակական նախաձեռնություններին:<sup>11</sup>

**Իտալիայում** բռնագանձված գույքը կարող է օգտագործվել տնտեսական, արդարադատության, հանրային կարգի, քաղաքացիական պաշտպանության, սոցիալական նպատակներով: Հաճախ բռնագրավված գույքը սոցիալական ծրագրերի շրջանակներում անհատույց օգտագործման իրավունքով հանձնվում է համայնքներին, հասարակական կազմակերպություններին (օրինակ՝ «Լիբերա» հիմնադրամը վարձակալությամբ օգտագործում է նախկին մաֆիայի հողերը սոցիալական նախագծերի համար) կամ պետությունն ինքն է իրականացնում նման ծրագրեր՝ բացելով խնամքի կենտրոններ, մանկապարտեզներ և այլն: Եթե գույքը վաճառվում է, ստացված գումարը չի կարող օգտագործվել աշխատավարձերի, պարգևավճարների վճարման նպատակով: Որպեսզի բռնագանձված գույքը չհայտնվի հանցավոր խմբավորումների կամ նախկին տերերի ձեռքում, հատուկ ստեղծված հանձնաժողովն ուսումնասիրում է բոլոր հայտերը, բացահայտում կապերը, որից հետո միայն եզրակացություն է տալիս այդ գույքի օգտագործման կամ տնօրինման վերաբերյալ: Կա նաև սահմանափակում, համաձայն որի գնորդը 5 տարվա ընթացքում իրավունք չունի վաճառելու գույքը, և եթե այդ ընթացքում

<sup>9</sup> Partners Albania for Change and Development, Social Reuse of Confiscated Assets from Organized Crime and Corruption by CSOs with an Increased Role of Local Government, 2024, <https://shorturl.at/wqKSI> (դիտված՝ 10.04.2026)

<sup>10</sup> Gleiss Lutz, New Regulations on Confiscations Orders and Asset Recovery in Criminal Law, 2017, <https://shorturl.at/4ofjF> (դիտված՝ 10.04.2026)

<sup>11</sup> Office for Asset Recovery and Management, <https://www.mjjusticia.gob.es/en/areas-actuacion/oficina-recuperacion-gestion> (դիտված՝ 10.04.2026), Maldita.es, From crime to community: the social reuse of confiscated assets in Italy, Spain and Romania, 2024, <https://maldita.es/malditodato/20240930/reuse-confiscated-assets-italy-spain-romania> (դիտված՝ 10.04.2026)

բացահայտվի նրա կապը նախկին սեփականատերերի կամ հանցավոր խբերի հետ, պայմանագիրը կիզվի, և գույքը կվերադարձվի պետությանը:<sup>12</sup>

**Նիդերլանդներում** շեշտադրվում է կառավարման թափանցիկությունը և կիրառվում է ակտիվների կառավարման կիսով չափ հանրային մոդել (հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ), արագ աճուրդային համակարգ, հանրային վերահսկողություն շահառուների վրա: 13

**Ռումինիայում** Գույքի կառավարման ազգային գործակալությունը (ANABI) Ազգային հարկային վարչության հետ միասին իրականացնում է բռնագրավված գույքի վերականգնումը և հանդիսանում է դրա սոցիալական վերօգտագործման հիմնական պատասխանատուն: Գործակալության կայքում հրապարակվում են պետական սեփականություն դարձած գույքի վերաբերյալ հայտարարություններ, որոնք կարող են փոխանցվել պետական հաստատություններին կամ հասարակական կազմակերպություններին հանցագործությունների կանխարգելման կամ զոհերին աջակցելու ծրագրերի համար:<sup>14</sup>

**Ֆրանսիայում** Բռնագրավված և առգրավված ակտիվների կառավարման և վերականգնման AGRASC գործակալությունը կառավարում է բռնագանձված գույքը՝ կենտրոնացնելով մեկ պետական կառույցում գույքի գնահատումը, աճուրդների կազմակերպումը, տնօրինումը մինչև դատական որոշում, վերադարձը հանրային շրջանառություն: Թմրամիջոցների և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործության բացահայտումից և բռնագանձումից ստացված եկամուտները: Բռնագանձված միջոցները AGRASC բաշխում է հետևյալ կերպ՝ 60 տոկոս՝ Ներքին գործերի նախարարությանը, 20 տոկոս՝ Արդարադատության նախարարությանը, 10 տոկոս՝ Տնտեսության և ֆինանսների նախարարությանը, և 10 տոկոս՝ MILDT-ին: Վերջինս իր մասնաբաժինն ուղղում է սոցիալական նպատակների՝ բաշխելով մի շարք կառույցների միջև (այդ թվում՝ Սոցիալական հարցերի նախարարությանը, Առողջապահության նախարարությանը, Գյուղատնտեսության նախարարությանը և Կրթության նախարարությանը):<sup>15</sup>

**ԱՄՆ-ում** գործում է Արդարացի բաժանման ծրագիր (Equitable Sharing Program), որում դաշնային մակարդակում բռնագանձված գույքի մի մասը վերադարձվում է իրավապահներին՝ որպես խրախուսում: Ծրագիրն ունի բարդ վերահսկողական մեխանիզմներ շահագործման չարաչափումը բացառելու համար:<sup>16</sup>

<sup>12</sup> Law N109 from 07.03.1996 on Provisions Regarding the Management and Disposal of Seized or Confiscated Assets, <https://shorturl.at/Ykb3c> (դիտված՝ 10.04.2026), Legislative Decree No. 159 from 06.09.2011 (Antimafia Code), <https://shorturl.at/2Ytmv> (դիտված՝ 10.04.2026), Libera, The Practices of Social Reuse of Confiscated Assets from Mafias: Numbers, Experiences and Proposals, 2024, <https://www.libera.it/documenti/schede/raccontiamo-il-bene-pubb-en.pdf> (դիտված՝ 10.04.2026), UN Interregional Crime and Justice Research Institute, The Social Re-use of Seized and Confiscated Assets: Good Policies and Practices, 2025, <https://shorturl.at/AL8Fh> (դիտված՝ 10.04.2026)

<sup>13</sup> Ministry of Justice and Security of the Netherlands, Asset Recovery Guide The Netherlands, 2024, <https://shorturl.at/vntMk> (դիտված՝ 10.04.2026)

<sup>14</sup> National Agency for the Management of Seized Assets, <https://anabi.just.ro/en> (դիտված՝ 10.04.2026)

<sup>15</sup> Agency for the Management and Recovery of Seized and Confiscated Assets, <https://agrasc.gouv.fr/en> (դիտված՝ 10.04.2026), Vettori B., Misoski B., Social Reuse of Confiscated Assets in the EU, <https://shorturl.at/abQmw> (դիտված՝ 10.04.2026)

<sup>16</sup> The Department of Justice Criminal Division, Asset Forfeiture Program, <https://www.justice.gov/criminal/criminal-mnf/equitable-sharing-program> (դիտված՝ 10.04.2026)

**Կանադայում** գործում են ակտիվների բռնագանձման նահանգային մարմիններ (օրինակ՝ Civil Forfeiture Office-ը Բրիտանական Կոլումբիայում), որոնք կարող են բռնագրավել գույքը քաղաքացիական կարգով՝ առանց դատավճռի: Ընդունված է նաև բռնագանձված միջոցներն ուղղել տուժողների աջակցման ծրագրերին:<sup>17</sup>

**Ուկրաինայում** ARMA (Asset Recovery and Management Agency) գործակալությունն իրականացնում է ինչպես գույքի բռնագանձում, այնպես էլ՝ դրա աճուրդներ, օգտագործում կամ պահպանում: Այն համագործակցում է միջազգային գործընկերների հետ: Ուկրաինայում ակտիվների արժեքի պահպանումն առաջնահերթ է մինչև դատական ակտը:<sup>18</sup>

**Թաիլանդում**<sup>19</sup> ակտիվների կառավարման համակարգը ձևավորվում է 1999 թ. ընդունված «Փողերի լվացման դեմ պայքարի մասին» օրենքով (Anti money laundering act) և դրա հիման վրա ստեղծված Anti-money laundering office (AMLO) մարմնով, որը միաժամանակ կատարում է և՛ ֆինանսական հետախուզության, և՛ ակտիվների հայտնաբերման, սառեցման, պահպանման ու տնօրինման կենտրոնական գործառույթները: Առանձնահատուկ է մինչև դատական վերջնական ակտը վարչական կարգով մինչև 90 օր ժամկետով սառեցման հնարավորությունը, ինչպես նաև «արագ արժեզրկվող» ակտիվների նախնական (մինչդատական) իրացումը արժեքի պահպանման համար: AMLO-ի կառուցվածքում գործող Asset Management Bureau-ն ապահովում է հաշվառում, պահպանում, անկախ գնահատում, աճուրդների կազմակերպում և, անհրաժեշտության դեպքում, ակտիվների փոխանցում այլ պետական մարմինների ծառայողական օգտագործման համար: Թվային թափանցիկությունն ապահովվում է AMCATS միասնական համակարգով, որն իրական ժամանակում ֆիքսում է յուրաքանչյուր ակտիվի իրավական ու նյութական «կյանքի ցիկլը»՝ ձեռքբերումից մինչև իրացում/վերադարձ: Ֆինանսական կայունության համար գործարկված է հատուկ ֆոնդ, որը մասամբ ձևավորվում է իրացումներից և ուղղվում է հետաքննությունների, կառավարման ծախսերի ու կարողությունների զարգացման ֆինանսավորմանը:

Միջազգային առաջատար փորձը՝ ի դեմս Իսպանիայի, Իտալիայի և Ֆրանսիայի, հստակ սահմանում է բռնագանձված գույքի հանրային վերահսկողության ներքո վերադարձի նպատակներն ու մեխանիզմները, մասնավորապես՝

- հավատարմագրային կառավարման մեխանիզմներ՝ հանրային նպատակներով օգտագործման համար,
- վերադարձ համայնքներին՝ ուղղակի հատկացման միջոցով,
- սոցիալական ուղղվածությամբ ՀԿ-ների համար արտոնյալ վարձակալական պայմաններ:

Լավագույն փորձ է դիտարկվում գույքի կառավարման գործառույթների մեկտեղումը, ինչպես որ Ֆրանսիայում AGRASC-ը, Ուկրաինայում՝ ARMA-ն, Թաիլանդում AMLO-ն համախմբում են գործառույթները մեկ «պատուհանի» մեջ:

<sup>17</sup> British Columbia Civil Forfeiture Office, <https://www2.gov.bc.ca/gov/content/safety/crime-prevention/civil-forfeiture-office> (դիտված՝ 10.04.2026)

<sup>18</sup> Asset Recovery and Management Agency, <https://arma.gov.ua/en> (դիտված՝ 10.04.2026)

<sup>19</sup> Greenberg Theodore S. et al., Management of Returned Assets: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture, The World Bank, 2009, p. 167-175, <https://shorturl.at/W0aSc> (դիտված՝ 10.04.2026)

Հատուկ ուշադրության է արժանի բռնագանձված գույքի կառավարման թափանցիկության բաղադրիչը: Ֆրանսիայի AGRASC-ը և Ուկրաինայի ARMA-ն պարբերաբար հրապարակում են ակտիվների «պորտֆելի քարտեզը»՝ կատեգորիաներով, իրացումների արդյունքներով, ծախս/եկամուտ հաշվետվությամբ: Թաիլանդի AMLO-ն ներդրել է AMCATS թվային հաշվառման համակարգը, որը թույլ է տալիս իրական ժամանակում հետևել ակտիվի կյանքին (հաշվառում, պահեստավորում, ծախսեր, իրացում): Այսպիսի «բաց հաշվապահություն»-ը՝ բաց տվյալներով, եականորեն բարձրացնում է համակարգի լեգիտիմությունը և թույլ է տալիս արտաքին վերահսկողություն:

## 2. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳԱՆՁՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

### 2.1. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ու կառավարմանն առնչվող դերակատարները

Հայաստանի Հանրապետությունում բռնագանձված գույքի կառավարման գործընթացում ներգրավված են մի շարք ինստիտուցիոնալ դերակատարներ, որոնք իրականացնում են ինչպես քաղաքական, այնպես էլ գործառնական բնույթի լիազորություններ:

**ՀՀ կառավարությունը** պետական գույքի կառավարման քաղաքականություն իրականացնող բարձրագույն մարմինն է, որը հաստատում է պետական գույքի գրեթե բոլոր հիմնական կարգավորումները՝ սկսած գրանցման, գնահատման, օտարման, վարձակալության, նվիրատվության, հավատարմագրային կառավարման և այլն:<sup>20</sup>

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համակարգում գործող Պետական գույքի կառավարման կոմիտեն** համարվում է ոլորտային լիազոր մարմին, որը պատասխանատու է պետական գույքի գրանցման, հաշվառման, պահպանման, արդյունավետ օգտագործման և օտարման ընդհանուր քաղաքականության իրականացման համար: Կոմիտեն է վերապահված նաև պետական գույքի կառավարման եռամյա ծրագրի մշակումը և իրականացումը:<sup>21</sup> Թեև «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքում ուղղակի անդրադարձ չկա կոմիտեին, օրենքում ամրագրված հղումները պետական գույքի կառավարմանը ենթադրում են կոմիտեի ներգրավվածությունը նաև բռնագանձված գույքի կառավարման գործընթացում:<sup>22</sup>

**ՀՀ ֆինանսների նախարարությունը** պատասխանատու է պետությանը պատկանող դրամական միջոցների պահպանման և կառավարման համար:<sup>23</sup>

**ՀՀ գլխավոր դատախազությունն** առանցքային դերակատար է ինչպես վարույթի նախաձեռնման և ներկայացման գործընթացում, այնպես էլ պետական տիրապետությանը հանձնված գույքի հավատարմագրային կառավարման մրցույթի կազմակերպման և

<sup>20</sup> «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենք, 20.11.2014, հոդված 6, <https://www.arlis.am/hy/acts/172266>

<sup>21</sup> Նույն տեղում, հոդված 6.1, 7

<sup>22</sup> «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, 16.04.2020, <https://www.arlis.am/hy/acts/142347>

<sup>23</sup> «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018, <https://www.arlis.am/hy/acts/143868>

պայմանագրի կնքման փուլերում: Ըստ ՀՀ կառավարության 2020 թ. դեկտեմբերի 17-ի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում պետության տիրապետությանը հանձնված գույքի հավատարմագրային կառավարման համար մրցույթ անցկացնելու կարգը և հավատարմագրային կառավարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 2066-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ հենց գլխավոր դատախազությունն է պարտավոր կազմակերպել պետական տիրապետությանն անցած գույքի հավատարմագրային կառավարման մրցույթները՝ ապահովելով գործընթացի իրավաչափ ընթացքը և հաշվետվողականությունը:<sup>24</sup>

**Հակակոռուպցիոն դատարանը** քննում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերը, առանցքային դեր է խաղում ինչպես վերջնական բռնագանձման մասին որոշման կայացման, այնպես էլ գույքի նկատմամբ ժամանակավոր ապահովման միջոցների կիրառման, այդ թվում՝ պետական տիրապետության հանձնելու վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացում: Դատարանի դերը կրում է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական բնույթ և ապահովում է ողջ գործընթացի օրինականությունը: Հարկ է շեշտել, որ գույքի ժամանակավոր հանձնման, հավատարմագրային կառավարման կամ օտարման բոլոր փուլերում որոշումները հնարավոր են միայն դատարանի թույլտվությամբ:<sup>25</sup>

**ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը** (ՀԿԱԾ) ներգրավվում է այն դեպքերում, երբ դատարանի թույլտվությամբ անհրաժեշտ է կազմակերպել գույքի օտարումը, օրինակ՝ շուտ փչացող կամ պահպանման համար ծախսատար գույքի պարագայում:<sup>26</sup>

**Հաշվեքննիչ պալատը,**<sup>27</sup> **Պետական վերահսկողական ծառայությունը**<sup>28</sup> և **Հակակոռուպցիոն կոմիտեն**<sup>29</sup> իրենց գործառույթների շրջանակում առանցքային դեր կարող են ունենալ ապօրինի ծագում ունեցող գույքի կառավարման արդյունավետության վերահսկողությունն իրականացնելու առումով:

**Ազգային ժողովն** ընդունում է օրենքներ և լսում ու քննարկում կոնկրետ մարմինների կողմից իրեն ներկայացրած պարբերական հաղորդումներն ու զեկույցները: Աժ պատգամավորների գործիքակազմում են նաև բանավոր ու գրավոր հարցումները, քննիչ հանձնաժողովների ձևավորումը և խորհրդարանական լսումների կազմակերպումը, որոնք սակայն բավարար և արդյունավետ չեն գործում:

<sup>24</sup> Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում պետության տիրապետությանը հանձնված գույքի հավատարմագրային կառավարման համար մրցույթ անցկացնելու կարգը և հավատարմագրային կառավարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2066-Ն ՀՀ կառավարության որոշում, <https://www.arlis.am/hy/acts/148374/latest>

<sup>25</sup> «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք

<sup>26</sup> «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, 05.05.1998, <https://www.arlis.am/hy/acts/75430>

<sup>27</sup> «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, 16.01.2018, <https://www.arlis.am/hy/acts/119273>

<sup>28</sup> «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018, <https://www.arlis.am/hy/acts/120947>

<sup>29</sup> «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, 24.03.2021, <https://www.arlis.am/hy/acts/151799>

## 2.2 Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն առնչվող իրավակարգավորումները

Հայաստանում ապօրինի ծագում ունեցող ակտիվների վերականգնումը կարգավորվում է «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքով, «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև մի շարք այլ առնչվող օրենքներով: Ընդ որում, «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ եթե օրենքի կարգավորումները հակասում են քաղաքացիական կամ այլ ոլորտի օրենսդրությանը, գերակայում են հենց այս օրենքով սահմանված դրույթները: Այսպիսով՝ օրենսդիրը հստակ առաջնահերթություն է տվել ոլորտի հատուկ կանոնակարգմանը:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ու կառավարման համակարգի գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի՝ մինչդատական, դատական և գույքի կառավարման փուլեր: Որոշ դեպքերում գույքի կառավարումը կարող է սկսվել ավելի վաղ փուլերում՝ մինչև դատական ակտի կայացումը, ինչի վերաբերյալ անդրադարձ կլինի հաջորդ բաժիններում:

### 1. Մինչդատական փուլ

Այս փուլը ներառում է ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ վարույթի սկիզբը, տվյալների ուսումնասիրությունը և եզրակացության կազմումը: Օրենքի 5-րդ հոդվածի հիման վրա ստացված տեղեկության հիմքով իրավասու մարմինը որոշում է՝ սկսել ուսումնասիրություն, թե ոչ: Նշված հոդվածի 2-րդ մասի 1-4-րդ կետերը վերաբերում են այն դեպքերին, երբ առկա է քրեական հետապնդում, իսկ 5-րդ և 6-րդ կետերը թույլ են տալիս սկսել վարույթ նաև առանց դրա: Մասնավորապես, նշված մասի 5-րդ կետով ուսումնասիրությունը կարող է նախաձեռնվել օպերատիվ-հետախուզական մարմնի զեկուցագրի հիման վրա՝ կապված պաշտոնատար անձի կամ նրա հետ փոխկապակցված անձի ապօրինի գույքի հետ, իսկ 6-րդ կետն իրավասու մարմնին տալիս է ինքնուրույն ուսումնասիրություն սկսելու իրավասություն, եթե առկա են բավարար տվյալներ գույքի ապօրինի ծագման վերաբերյալ:

Մինչդատական փուլում իրականացվում են՝ հարցումներ ու տեղեկատվության հավաքագրում, տվյալների վերլուծություն, անհրաժեշտության դեպքում՝ նախնական ապահովման միջոցների կիրառում, անձի ծանուցում, նյութերի տրամադրում և ստացված դիրքորոշման ուսումնասիրություն: Փուլի ավարտին կազմվում է եզրակացություն, որի հիման վրա ընդունվում է որոշում՝ դատարան հայցադիմում ներկայացնելու մասին կամ ուսումնասիրությունը դադարեցնելու վերաբերյալ: Նշենք, որ ուսումնասիրությունը կարող է դադարեցվել նաև առանց անձի ծանուցման, եթե պարզվում է, որ գույքն ամբողջությամբ հիմնավորվում է օրինական աղբյուրներով: Բացի այդ՝ ուսումնասիրությունը կարող է ավարտվել հաշտության համաձայնության կնքմամբ:

## 2. Դատական փուլ

Այս փուլը սկսվում է Հակակոռուպցիոն դատարան հայցադիմումի ներկայացմամբ և ավարտվում է՝ դատարանի կողմից կայացրած վերջնական ակտի օրինական ուժի մեջ մտնելով: Դատավարական ընթացակարգը հիմնականում կարգավորվում է Քաղաքացիական դատավարության օրենսգրքով:

Բացառություն է ապացուցման բեռի վերաբաշխման կարգավորումը: «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ գործում է ապօրինի ծագման կանխավարկածը, որի ուժով դատարանը կարող է բավարարել հայցը, եթե հաստատվում է, որ գույքը չի հիմնավորվում օրինական եկամուտներով: Այս պարագայում անձը պետք է ապացուցի գույքի օրինական աղբյուրը, հակառակ դեպքում գույքը ճանաչվում է ապօրինի և բռնագանձվում:

Դատական ակտի ընդունումից հետո, օրենքի 24-րդ հոդվածի համաձայն, բռնագանձված գույքը դառնում է պետության սեփականություն՝ ավարտելով դատական փուլը և հիմք ստեղծելով դրա հետագա կառավարման համար:

## 3. Գույքի կառավարման փուլ

Կարևոր է արձանագրել, որ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված կարգավորումները հիմնականում կենտրոնանում են բռնագանձման գործընթացի դատավարական կողմի վրա, մինչդեռ գույքի կառավարման բաղադրիչը բաց է: Այս նպատակով օրենքում նախատեսված չէ առանձին գլուխ, չնայած որ գույքի կառավարումը ապօրինի ակտիվների վերադարձի և հանրային շահի վերականգնման ամբողջական շղթայի անբաժան մաս է: Սա ենթադրում է բռնագանձված գույքի կառավարման գործառույթի փոխանցում այլ ոլորտային օրենսդրությամբ սահմանված ինստիտուտներին: Այդպիսով, բռնագանձված գույքի նկատմամբ կիրառվում են «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգավորումները:

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ գույքի կառավարումը կարող է սկսվել ինչպես դատարանի որոշումից հետո, այնպես էլ, որոշ դեպքերում, մինչև դատական ակտի ընդունումը: Մասնավորապես, օրենքի 25-րդ հոդվածը նախատեսում է ապօրինի ծագում ունեցող գույքի նկատմամբ դատարանի կողմից ժամանակավոր ապահովման միջոցների կիրառման և գույքը պետության տիրապետությանը հանձնելու հնարավորությունը, ինչը իրավասու մարմիններին հնարավորություն է տալիս այդ գույքը վերահսկել, պահպանել կամ սահմանափակել՝ ապահովելով հետագա բռնագանձման գործընթացի արդյունավետությունը: Նման որոշում կարող է կայացվել բացառիկ դեպքերում՝ ելնելով գործի քննության առանձնահատկություններից, մասնավորապես՝

- երբ առկա է հիմնավոր հավանականություն, որ հակառակ դեպքում գույքի արժեքը կարող է էականորեն նվազել,
- երբ առկա է հավանականություն, որ գույքը կարող է օգտագործվել հանցագործության կատարման համար,

- երբ գույքի կամ դրա օգտագործման առանձնահատկություններից ելնելով՝ այն պատասխանողի մոտ թողնելը կարող է խոչընդոտել հետագա բռնագանձմանը:

Գույքը պետության տիրապետությանը հանձնելուց հետո դրա պահպանումը և կառավարումը իրականացվում է պետության կողմից և այս գործառույթների համար անհրաժեշտ ծախսերը ծածկվում են պետական բյուջեից:

Օրենքի 25-րդ հոդվածը նախատեսում է մի քանի հնարավոր ձևաչափ գույքի կառավարումը կազմակերպելու համար՝

- *Պետության միջոցով ուղիղ կառավարում*, երբ գույքը պահվում և հսկվում է պետական մարմնի ուժերով: Այս դեպքում բաց է մնում, թե կոնկրետ ով պետք է իրականացնի այս կառավարումը, քանի որ Դատախազության լիազորություններում առկա չէ գույքի մշտական կամ ժամանակավոր կառավարման որևէ լիազորություն, իսկ Պետական գույքի կառավարման կոմիտեն կառավարում է բացառապես ՀՀ սեփականությանն անցած գույքը:
- *Հանձնարարում պետական կամ համայնքային կառույցներիին*, որոնք ունեն համապատասխան սարքավորումներ, տարածքներ և աշխատակազմ:
- *Հավատարմագրային կառավարում*, որը կիրառվում է, երբ անհրաժեշտ է գույքի մասնագիտացված ընթացիկ կառավարում: Հավատարմագրային կառավարման մեխանիզմը կարգավորվում է ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 17-ի N 2066-Ն որոշմամբ: Համաձայն այս իրավական ակտի՝ հավատարմագրային կառավարչի ընտրության համար կազմակերպվում է մրցույթ ՀՀ գլխավոր դատախազության կողմից: Մրցույթն անց է կացվում բաց եղանակով՝ դատախազության պաշտոնական կայքում առնվազն 40 օր առաջ հրապարակելով պայմաններն ու պահանջները: Մրցույթային հայտերում պարտադիր պետք է ներկայացվեն կառավարման ծրագիրը, տեխնիկական և մասնագիտական կարողությունները, ֆինանսական ռեսուրսների աղբյուրները և առաջարկվող վարձատրությունը: Մրցույթի արդյունքների հիման վրա կնքվում է հավատարմագրային կառավարման պայմանագիր, որի օրինակելի ձևը սահմանվում է կառավարության կողմից: Պայմանագրով ամրագրվում են գույքի հանձնումը, շահույթի տնօրինման, վերահսկողության, հաշվետվության և պատասխանատվության պայմանները: Հավատարմագրային կառավարիչը յուրաքանչյուր ամիս հաշվետվություն է ներկայացնում կառավարման հիմնադրին՝ ՀՀ-ին՝ ի դեմս ՀՀ գլխավոր դատախազության: Այս մեխանիզմը թույլ է տալիս պետական մարմիններին արդյունավետ կառավարել մեծածավալ կամ բարդ գույքային ակտիվներ՝ մինչև վերջնական դատական ակտը: Չնայած կառուցվածքային ամբողջականությանը՝ գործող կարգավորումները օպերատիվության տեսանկյունից ունեն մի շարք խնդիրներ, որոնք կարող են խաթարել գույքի արդյունավետ կառավարումը: Մասնավորապես, մինչ գույքը կհանձնվի կառավարիչին, կարող է անցնել ավելի քան մեկուկես ամիս, ինչը վտանգավոր է արագ արժեզրկվող գույքի դեպքում: Օրենքը կամ կառավարության որոշումը չեն սահմանում ժամանակավոր կառավարման ընթացակարգ դատական ակտի կայացումից մինչև պայմանագրի կնքումն ընկած ժամանակահատվածում: Կարգը չի նախատեսում արագացված ընթացակարգեր շուտ փչացող, վտանգավոր

կամ իրացման կարիք ունեցող գույքի համար: Այսպիսի պայմաններում կարող է առաջանալ գույքի վերացման, սպառման կամ արժեզրկման վտանգ, ինչը կհանգեցնի դատարանի կողմից կայացված ակտի անկատար մնալուն և կիմաստազրկի այն:

Որոշ դեպքերում, մասնավորապես՝ շուտ փչացող կամ բարձր ծախս պահանջող շարժական գույքի դեպքում, օրենքի 26-րդ հոդվածը թույլ է տալիս դրա ժամանակավոր օտարում: Այս նպատակով իրավասու մարմինը դիմում է դատարան՝ խնդրելով թույլատրել գույքի իրացումը մինչև գործի ավարտը:

Գործի քննությունն իրականացվում է դատական նիստում՝ բոլոր շահագրգիռ անձանց մասնակցության հնարավորությամբ, սակայն նրանց բացակայությունը արգելք չէ որոշման կայացման համար: Դատարանը որոշում է կայացնում հաշվի առնելով

- ներկայացված փաստարկները,
- գույքի պահպանման առանձնահատկությունները,
- գործին մասնակցող անձանց դիրքորոշումը:

Դատարանի թույլտվության հիման վրա գույքի իրացումը կատարվում է «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ստացված միջոցները պահվում են պետության տիրապետության ներքո մինչև հայցի ապահովման միջոցների վերացումը կամ դատարանի վերջնական ակտի ուժի մեջ մտնելը:

Այսպիսով՝ օրենսդրական կարգավորումները ստեղծում են իրավական հիմք, որը թույլ է տալիս դեռևս չբռնագանձված, բայց հավանական ապօրինի ծագում ունեցող գույքը օպերատիվ կերպով զերծ պահել թաքցնելու, փչացնելու կամ չարաշահելու ռիսկերից: Այնուամենայնիվ, օրենքով նախատեսված պետական կառավարման գործիքակազմը որոշ հարցերում, ինչպես օրինակ ժամանակավոր կառավարումն իրականացնող հիմնական մարմնի հարցում կամ գույքի հավատարմագրային կառավարման հանձնելու հարցում ամբողջական չէ, չի ապահովում լիարժեք արդյունավետություն:

### **2.3 Պետական գույքի կառավարմանն առնչվող իրավակարգավորումները ապօրինի գույքի բռնագանձման վարույթի շրջանակում**

Ապօրինի ծագմամբ գույքի բռնագանձման արդյունքում գույքը դառնում է պետական սեփականություն, ինչի հետևանքով անմիջապես ներառվում է գույքի կառավարման համակարգի մեջ և կառավարվում 2014 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ըստ այս օրենքի՝ գույքի կառավարումն ընդգրկում է մի շարք փուլեր՝

- գույքի հաշվառում և գրանցում պետական գրանցամատյանում (հոդվածներ 10–15),
- գույքի գնահատում՝ օբյեկտիվ և օրինական մեթոդներով (հոդված 16),
- կառավարման ծրագիր՝ երեք տարվա կտրվածքով սահմանված գործողությունների համակարգ (հոդվածներ 17–19),

- օտարում, օգտագործում, նվիրատվություն կամ փոխանակում՝ ըստ օրենքով նախատեսված ձևերի և նպատակների (հոդվածներ 20–31),
- վերահսկողություն և արդյունավետության գնահատում պետական մարմինների կողմից (հոդվածներ 36–37):

«Պետական գույքի կառավարման մասին» օրենքի կառուցվածքը ձևավորված է պետական գույքի կյանքի ցիկլի դասական մոդելով՝ սկսած նպատակների ձևակերպումից և սկզբունքներից մինչև հաշվառում, գրանցում, տնօրինում և վերահսկողություն: Այն, սակայն, գերազանցապես ֆորմալիստական է և ընդհանուր բնույթի, ինչի հետևանքով չի կարողանում լիարժեք սպասարկել հատուկ կարգավիճակ ունեցող գույքի, այդ թվում՝ բռնագանձված ակտիվների կարիքները:

Օրենքի տրամաբանությունն այնպիսին է, որ բռնագանձված գույքի տնօրինման հարցում պետք է կիրառվեն պետական գույքի կառավարման ոլորտում գործող ընդհանուր կանոնները: Օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է երեք հիմնական սկզբունք, որոնք ուղղակիորեն կապվում են ապօրինի գույքի հետագա տնօրինման հարցին՝

- պետական գույքի կառավարման ոլորտում միասնական քաղաքականության վարում,
- պետական գույքի կառավարման թափանցիկության և հրապարակայնության ապահովում,
- պետական գույքի կառավարման ոլորտում գործող մասնակիցների գործառույթների և շահերի ներդաշնակության ապահովում:

Այս սկզբունքների պահպանումը հատկապես կարևոր է, երբ բռնագանձվում է գույք, որը կարող է հանրային մեծ ուշադրության առարկա լինել, որի կառավարումը ինքնին բարդ ու բազմաշերտ գործընթաց է և կարող է ուղեկցվել խոչընդոտներով, այդ թվում՝ նախկին սեփականատերերի կամ փոխկապակցված անձանց կողմից: Այսպիսի ակտիվների հաշվառումը, պահպանությունն ու իրացումը պետք է իրականացվեն բաց, վերահսկելի և հաշվետու մեխանիզմների միջոցով: Մինչդեռ օրենքով նախատեսված չեն բռնագանձված գույքի պատշաճ հաշվառման, պահպանման, թափանցիկ տնօրինման և սոցիալապես նպատակային օգտագործման մեխանիզմների վերաբերյալ կոնկրետ դրույթներ:

Օրենքը ենթադրում է պետական գույքի կառավարման միասնական համակարգի կիրառում բոլոր տեսակի գույքի նկատմամբ, առանց տարանջատման՝ ըստ ծագման կամ օգտագործման ռիսկերի: Սա անտեսում է այն իրողությունը, որ ապօրինի ծագում ունեցող գույքը, որը բռնագանձվել է դատական ընթացակարգերի շրջանակում, ըստ էության պետք է ընկալվի ոչ միայն որպես գույքային ռեսուրս, այլև որպես վերականգնողական արդարադատության և հակակոռուպցիոն քաղաքականության գործիք:

Օրենքի 9-րդ հոդվածը սահմանում է պետական գույքի կառավարման յոթ հիմնական նպատակ՝

- կառավարման արդյունավետության բարձրացում,
- միասնական համակարգի ձևավորում,
- պետական բյուջեի եկամուտների ավելացում,

- միասնական քաղաքականության իրականացում,
- գույքի ամբողջական հաշվառում,
- բաժնեմասերի կառավարման արդյունավետություն,
- գույքային հարաբերությունների կարգավորում:

Սակայն այդ նպատակները մնում են չափազանց ընդհանուր և, առավել ևս, չհամադրված բռնազանձված գույքի կառավարման առանձնահատկությունների հետ: Դրանք հիմնականում վերաբերում են կազմակերպչական և հաշվապահական ոլորտներին՝ առանց ռազմավարական կամ ծրագրային բաղադրիչի:

Սահմանված նպատակներից և ոչ մեկը չի վերաբերում բռնազանձված գույքի կառավարումը հանրային շահի ապահովման նպատակով օգտագործելու հնարավորությանը: Օրինակ՝ չկան դրույթներ, որոնք կառաջարկեն գույքի օպտիմալ օգտագործման ոլորտներ՝ կրթություն, առողջապահություն, երիտասարդական ծրագրեր կամ համայնքային զարգացում: Այս նպատակայնության բացը ցույց է տալիս, որ պետությունը չունի միասնական քաղաքականություն՝ ուղղված բռնազանձված գույքի կառավարման արդյունքում առաջացող հանրային օգուտը առավելագույնի հասցնելուն: Ավելին, ծրագրերի թիրախային ուղղությունների բացակայությունը ստեղծում է այնպիսի իրավիճակ, որ բռնազանձված գույքը կարող է պարզապես սառեցվել, օտարվել նվազագույն եկամուտով կամ արդյունավետ չօգտագործվել՝ չծառայելով պետական ռազմավարական առաջնահերթություններին:

Գործող օրենքը չի նախատեսում ոչ մի կարգավորում, որը հնարավոր կդարձներ տարբեր մոդելներով գույքի կառավարում պետական կառույցների ներսում և դրանցից դուրս: Մասնավորապես, բացակայում են մեխանիզմները, որոնք հնարավորություն կտան գույքը հանձնել ոչ միայն պետական կառույցներին, այլ նաև հասարակական կազմակերպություններին, կրթական հիմնարկներին կամ մասնավոր հատվածին՝ սոցիալական պահանջներով պայմանավորված: Մինևույն ժամանակ, պետությունը չունի գույքն ըստ դրա բնույթի նպատակային ուղղորդելու մոտեցում (օրինակ՝ գյուղատնտեսական, բնակարանային, ֆինանսական, արդյունաբերական և այլ նպատակներով): Սա նաև վկայում է կառավարիչների ընտրության հիմքերի և գույքի տեղաբաշխման քաղաքականության բացակայության մասին: Գույքը պարզապես ձևականորեն հանձնվում է պետական կառույցներին կամ օտարվում առանց գնահատելու դրա պոտենցիալը կամ հանրային նպատակին ծառայելու հնարավորությունը: Արդյունքում՝ պետական գույքի կառավարման ընթացակարգերը մնում են առավելապես կենտրոնացված, վարչական և միատեսակ բնույթի, ինչը թույլ չի տալիս ապահովել անհրաժեշտ օպերատիվություն կամ նորարարական մոտեցումներ:

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման արդյունավետ իրականացման համար պետական գույքի կառավարման համակարգը պետք է ունենա ոչ միայն ֆորմալ իրավական հիմք, այլև ռազմավարական ուղղվածություն: Մինչդեռ, ըստ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի կարգավորումների, բռնազանձված գույքը պարզապես «ձուլվում» է ընդհանուր պետական գույքի համակարգում՝ առանց համապատասխան վերագրումների, ինչը զրկում է պետությանը հանրային քաղաքականությունից բխող արդյունքներ ստանալու հնարավորությունից: Կառավարման բազմազանության և ծրագրային ուղղորդվածության բացը, ինչպես նաև հողված 9-ում ամրագրված

նպատակների սահմանափակությունը, հուշում են այն մասին, որ ներկայումս ՀՀ-ն չունի լիարժեք իրավական և կառավարչական տեսլական՝ ապօրինի ծագում ունեցող գույքի պետականացման և վերափոխարկման հարցում:

Ընդհանուր առմամբ, օրենքի ողջ տրամաբանությունը կառուցված է հետևյալ երեք առանցքային ուղղություններով՝

- պետական գույքի եկամտաբեր կառավարում՝ ներառյալ դրա վարձակալությունը, հավատարմագրային կառավարումը և օտարումը,
- պետական բյուջեի եկամուտների ավելացման խթանում՝ օգտագործելով գույքի կառավարման մեխանիզմները,
- մասնավոր հատվածի ներգրավում պետական գույքի շրջանառության մեջ:

Այս ուղղությունները, թեև անհրաժեշտ են արդյունավետության տեսակետից, բացառում են ոչ եկամտաբեր, սակայն հանրային շահ ներկայացնող գույքի օգտագործման սցենարները: Օրինակ՝ օրենքում բացակայում է հնարավորություն, որ բռնագանձված գույքը առանց աճուրդի կարող է ուղղվել կրթական, առողջապահական կամ համայնքային ծրագրերին՝ որպես սոցիալական վերօգտագործում:

Պետք է նշել նաև, որ սոցիալական վերօգտագործման գործիքների բացակայության պայմաններում բռնագանձված գույքի հետագա ճակատագիրը հաճախ որոշվում է գերազանցապես հայեցողական տրամաբանությամբ՝ առանց նախապես սահմանված չափանիշների և հրապարակելի հիմնավորումների: Որպես հետևանք՝ նույնիսկ այն դեպքերում, երբ ակտիվը կարող էր ունենալ հանրային կիրառելիություն (օրինակ՝ համայնքային կամ սոցիալական ծառայությունների համար), գործնականում գերակայում է աճուրդային օտարման «կանխադրված» (by default) տարբերակը: Առկա չեն չափանիշներ, որոնք թույլ կտան փաստարկված կերպով որոշել առհասարակ վերօգտագործման կամ օտարման նպատակահարմարությունը:

«Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածը որպես գույքի եկամտաբեր կառավարման եղանակ դիտարկում է նաև վարձակալությունը: Թեև այս հոդվածի կարգավորումները տեսականորեն կարող են կիրառվել սոցիալական շահի սպասարկման նպատակով (օրինակ՝ վարձակալությամբ տրամադրվելով որևէ սոցիալական ծրագիր իրականացնող կազմակերպության, կամ համայնքի, կամ պետական որևէ այլ կառույցի), օրենքը չի սահմանում արտոնյալ ռեժիմներ կամ նախընտրելի կարգ համայնքային/պետական կառույցների կամ հասարակական կազմակերպությունների համար:

«Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի 20-րդ և 21-րդ հոդվածներում սահմանվում է, որ գույքի օտարումը հիմնականում բաց աճուրդով կամ աճուրդից դուրս արվում է՝ հաշվի առնելով պետական շահերը, սակայն հստակ չի նշում հանրային կամ սոցիալական շահի առաջնահերթությունը: Սա էական բաց է. գույքը, նույնիսկ եթե կարող է օգտագործվել որպես դպրոց, համայնքային կենտրոն կամ բուժհաստատություն, չունի օրենսդրական պաշտպանություն, որպեսզի պահպանվի պետության կամ համայնքի տիրապետության ներքո՝ առանց վաճառքի: Ավելին, քանի որ գույքի պետական

օգտագործման նպատակները չեն տարբերակվում ըստ սոցիալական առաջնահերթության, անգամ բացառիկ դեպքերում, երբ գույքը կարող էր ծառայել հանրությանը՝ վերջինս վաճառվում է՝ որպես բյուջետային միջոցների աղբյուր:

Հարկ է նշել նաև, որ չնայած օրենքի 25-26-րդ հոդվածները սահմանում են բռնագանձման ընթացքում գույքի ժամանակավոր կառավարումը, այդ թվում՝ հավատարմագրային կառավարման հնարավորությունը, ինչպես նաև որոշ դեպքերում օտարումը, կրկին չկա մեխանիզմ, որ այդ կառավարումը կամ օտարումը կարող է կիրառվել սոցիալական վերօգտագործման նպատակով: Քանի որ օրենքով չկան հստակ ընթացակարգեր, պետական մարմինները չեն էլ դիտարկում այլընտրանքային օգտագործման այդ տարբերակը:

«Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի կառուցվածքը երեք առանցքում է՝ եկամտաբեր կառավարում (վարձակալություն, օտարում, հավատարմագրային կառավարում), բյուջետային եկամուտների ավելացում, գույքի շրջանառություն մասնավորի ներգրավմամբ: Սրանք անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմաններ են բռնագանձված ակտիվների վերականգնողական նպատակների համար: Նաև, հաշվի առնելով, որ բռնագանձված գույքը կարող է ներառել լայն շրջանակ ունեցող ակտիվներ անշարժ և շարժական գույքից մինչև ֆինանսական միջոցներ ու այլ իրավունքներ, դրանց արդյունավետ և նպատակային կառավարումը պահանջում է հստակեցված ընթացակարգեր՝ ներառյալ գույքի գնահատման, շահավետ օգտագործման կամ օտարման եղանակների ձևակերպում, ինչպես նաև համապատասխան հաշվետվողական և վերահսկողական մեխանիզմների ապահովում:

ԵՄ դիրեկտիվ 2024/1260-ի IV գլխի, FATF-ի հանձնարարականների և StAR-ի ուղեցույցների համեմատությամբ՝ «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքի մոտեցումը թերի է երեք ռազմավարական բաղադրիչով՝

- *Վաղ փուլից կառավարման պլանավորում և արժեքի պահպանում.* ԵՄ 2024/1260 դիրեկտիվը (հոդվածներ 20–21) և StAR-ը պահանջում են սառեցված/բռնագանձման ենթակա ակտիվների համար նախնական գնահատում ու արագ իրացում արժեքի կորուստը կանխելու նպատակով (շարժական, արագ արժեզրկվող ակտիվների, բարձր պահպանական ծախսերի դեպքերում): Հայաստանի օրենքները այսպիսի հնարավորության տարրեր ունեն, բայց բացակայում են ընթացակարգային մեխանիզմները՝ հստակ ժամկետներով, պատասխանատու մարմնով և նախապես հաստատված օրինակելի փաստաթղթերով: Սա էական է հատկապես այն պարագայում, երբ կառավարիչ ընտրելու մրցութային գործընթացը տևում է շաբաթներ:
- *Մասնագիտացված կառավարման ինստիտուցիոնալացում.* ԵՄ 2024/1260 դիրեկտիվի 22-րդ հոդվածը պարտադրում է գոնե մեկ կառավարման մասնագիտացված մարմնի կամ ստորաբաժանման առկայություն սառեցված և բռնագանձված ակտիվների պահպանման, գնահատման ու տնօրինման համար: ՀՀ համակարգում նման մասնագիտացված կառույց չկա. գործառույթները բաշխված են Դատախազության (հավատարմագրային կառավարման մրցույթների կազմակերպում), Պետական գույքի կառավարման կոմիտեի (հաշվառում, օտարում), ԱՆ հարկադիր կատարում

ապահովող ծառայության (իրացում) միջև՝ առանց ոլորտային հստակ տարաբաժանման: Սա հատկապես սահմանափակում է այն դեպքերի արդյունավետ կառավարումը, երբ, օրինակ, բռնազանձված ակտիվը գործող ձեռնարկություն է և կարող է պահպանվել որպես եկամտաբեր ակտիվ մինչ դրա վերջնական տնօրինումը:

- *Չանրային նպատակի առաջնայնություն և սոցիալական վերօգտագործում.* ՄԱԿԴԿ-ի 57-րդ հոդվածի «վերադարձ հասարակությանը» տրամաբանությանը և ԵՄ 2024/1260 դիրեկտիվի սոցիալական օգտագործման հորդորներին համահունչ՝ առաջատար իրավակարգերը նախատեսում են բռնազանձված գույքի ուղղորդում համայնքներին, հասարակական կազմակերպություններին (արտոնյալ վարձակալություն, սոցիալական ձեռնարկատիրություն): ԶԶ-ում «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի նպատակները չեն ներառում սոցիալական վերօգտագործումը՝ որպես ինքնուրույն նպատակ:

StAR-ը և ԵՄ 2024/1260-ը դիրեկտիվը առաջարկում են ռազմավարական բազմազանություն՝ օժտված իրավաչափության և հաշվետվողականության հստակ փաթեթով (միջուկային, բայց նաև սոցիալական նպատակային ուղղակի փոխանցման եզակի ուղիներ): ԶԶ օրենքում, հակառակը, գերակայում է առաջնային եկամտի մոտեցումը, որի հետևանքով սոցիալական վերօգտագործման պոտենցիալը մնում է չօգտագործված:

Ի տարբերություն Իտալիայի և Իսպանիայի մոդելների՝ ԶԶ օրենքում

- չկա արտոնյալ ռեժիմ համայնքներին/ԶԿ-ներին սոցիալական օգտագործմամբ հանձնելու համար (ոչ աճուրդային, ուղղակի հատկացում կամ արտոնյալ վարձակալություն՝ հստակ չափորոշիչներով),
- չկա «շաղկապության» կանխարգելման ուղղվածություն, երբ գույքը հասարակական նպատակի տեսքով ավելի մեծ սոցիալական վերադարձ է ապահովում, քան մերկ ֆինանսական իրացումն աճուրդով,
- չկա ճյուղային վերաբաշխման քաղաքականություն (գույք՝ ըստ բնույթի՝ կրթություն/առողջապահություն/թմրամոլության դեմ ծրագրեր/երիտասարդություն/ համայնքային ենթակառուցվածք):

Բռնազանձված գույքի օտարման ընթացքում մասնագիտական քննարկումներում հաճախ բարձրացվում է հարցը՝ արդյոք ընդունելի է, որ գույքը հետագայում օտարվի հենց նույն անձին (կամ նրա հետ փոխկապակցված անձանց), որի նկատմամբ իրականացվել է բռնազանձման վարույթը: Այս հարցը ունի ոչ միայն իրավական, այլև հանրային-քաղաքական (լեգիտիմության) նշանակություն, քանի որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնազանձման ինստիտուտը ընկալվում է որպես վերականգնողական արդարադատության և հակակոռուպցիոն քաղաքականության գործիք:

Մի կողմից՝ կարող է դիտարկվել «շուկայական արդյունավետության» փաստարկը. եթե գույքն օտարվում է բաց, մրցակցային և թափանցիկ աճուրդով, պետության առաջնային շահը կարող է լինել առավելագույն գնի ապահովումը, իսկ նախկին սեփականատիրոջը մասնակցել չթույլատրելը տեսականորեն կարող է նվազեցնել մրցակցությունը և հանգեցնել գնի անկման: Մյուս կողմից՝ հակակոռուպցիոն քաղաքականության տեսանկյունից նույն անձին գույքը վերադարձնելու (գործարքի միջոցով «հետ բերելու») հնարավորությունը կարող է

թուլացնել բռնագանձման սիմվոլիկ և կանխարգելիչ ազդեցությունը, ինչպես նաև ձևավորել հանրային ընկալում, թե ապօրինի ճանապարհով ձեռք բերված ակտիվը փաստացի «օրինականացվում» է՝ վերադառնալով նույն շահառուին: Այս ընկալումն ինքնին կարող է խաթարել ինստիտուտի նկատմամբ վստահությունը՝ նույնիսկ այն դեպքերում, երբ օտարումը ֆորմալ առումով տեղի է ունեցել օրինական ընթացակարգով:

Նաև պետք է նշել, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված «հաշտության համաձայնության» ինստիտուտի առկայությունը ինքնին չի նշանակում, որ նույն տրամաբանությունը պետք է տարածվի բռնագանձված գույքի հետդատական օտարման վրա: Հաշտությունը դատավարական գործիք է, որը կիրառվում է՝ հաշվի առնելով դատավարական ռիսկերը, ապացուցման բարդությունը, գործընթացի արժեքը և ժամանակային գործոնը՝ նպատակ ունենալով հասնել գործի արագ և կանխատեսելի ավարտի: Ի տարբերություն դրա՝ գույքի վերջնական բռնագանձումից հետո պետությունը տնօրինում է արդեն իսկ հանրային ռեսուրս դարձած ակտիվ, և այստեղ առաջնային են ոչ միայն եկամտային արդյունքը, այլ նաև հանրային շահի իրացումը, լեգիտիմության ապահովումը և շահերի բախման ռիսկերի կանխարգելումը:

Ուստի, բռնագանձված գույքի օտարումը նախկին սեփականատիրոջը կամ նրա հետ փոխկապակցված անձանց պետք է դիտարկել որպես բարձր ռիսկային սցենար, որը պահանջում է առնվազն հատուկ սահմանափակումներ և ուժեղացված հակակոռուպցիոն ապահովագրումներ (օրինակ՝ փոխկապակցվածության խիստ ստուգում, բաց տվյալներ, անկախ վերահսկողություն, «բացառիկ դեպքի» հիմնավորում): Առանց նման մեխանիզմների, նույնիսկ ֆորմալ մրցութային/աճուրդային գործարքը կարող է առաջացնել հանրային վստահության կորուստ և հակասել բռնագանձման ինստիտուտի վերականգնողական նպատակին:

Միաժամանակ հնարավոր է առավել հավասարակշռված մոտեցում, ըստ որի նախկին սեփականատիրոջը (կամ նրա հետ փոխկապակցված անձանց) գույքի օտարումը թույլատրվում է ոչ թե որպես «սովորական շուկայական տարբերակ», այլ որպես վերջին միջոց (*ultima ratio*) այն դեպքում, երբ պետությունը փաստացիորեն սպառել է գույքի օգտագործման և իրացման այլ իրավաչափ ուղիները: Այս մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ բռնագանձված գույքը նախ պետք է փորձարկվի հանրային շահի առավել բարձր պոտենցիալ ունեցող սցենարներով (պետական/համայնքային օգտագործում, սոցիալական վերօգտագործում, վստահելի կառավարման ձևաչափեր), ապա՝ բաց և մրցակցային իրացմամբ, և միայն դրանց անհնարինության կամ ակնհայտ անարդյունավետության դեպքում դիտարկվի վերադարձի ռիսկային տարբերակը: Այդպիսով պահպանվում է ինստիտուտի վերականգնողական և կանխարգելիչ տրամաբանությունը՝ նվազեցնելով հանրային ընկալման «հետագա օրինականացման» վտանգը:

## 2.4 Թափանցիկության և հաշվետվողականության ներկա վիճակը

Ինչպես «Պետական գույքի կառավարման մասին» օրենքը, այնպես էլ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքն ունեն լրջագույն բացեր թափանցիկության և հաշվետվողականության ապահովման առումով:

ՀՀ կառավարության լիազորությունների, մասնավորապես՝ գրանցման, գնահատման, օտարման, վարձակալության, նվիրատվության, հավատարմագրային կառավարման և այլնի վերաբերյալ հաշվետվողականությունը սահմանափակվում է միայն ներքին գերատեսչական ընթացակարգերով: Օրենսդրությամբ նախատեսված չէ, օրինակ՝

- Ազգային ժողովին հաշվետվություն ներկայացնելու պարտադիր ընթացակարգ,
- հանրային հաշվետվությունների պարտադիր հանրամատչելի հրապարակում,
- որոշումների հրապարակման ժամկետներ:

Պետական գույքի կառավարման կոմիտեն իր գործառնություններով հաշվետու է միայն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին, իսկ հանրային հաշվետվողականության արագացված գործիքներ գործնականում չեն կիրառվում: Ըստ գույքերի՝ իրավական ակտերի նախագծերը հիմնականում շրջանառվում են կառավարության ներսում՝ համապատասխան նախարարության միջոցով, և միայն օրենքով նախատեսված և նորմատիվ ակտի դեպքերում են ներկայացվում հանրային քննարկման *e-draft.am* հարթակում, ինչի հետևանքով ոլորտում հանրային մասնակցայնությունը մնում է սահմանափակ: Բացի այդ՝ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 7-րդ հոդվածում նշված է, որ կոմիտեն մշակում է տարեկան հաշվետվություն նախարարին ներկայացնելու նպատակով, սակայն որևէ ձևով նախատեսված չէ այդ հաշվետվության հրապարակայնությունը կամ այլ կերպ հասանելիությունը, հաշվետվությունների առկայությունը կոմիտեի կայքում կամ այլ հարթակներում, գնահատման կամ վերահսկման մեխանիզմներ՝ անկախ մարմինների կողմից:

Միաժամանակ, պետք է նշել, որ Պետական գույքի կառավարման կոմիտեն գործնականում հրապարակում է եռամսյակային և տարեկան հաշվետվություններ,<sup>30</sup> ինչպես նաև պաշտոնական կայքում առկա է հաշվետվություն՝ պետությանը փոխանցված ապօրինի ծագում ունեցող գույքի վերաբերյալ:<sup>31</sup> Միաժամանակ, կոմիտեին ուղղված հարցման պատասխանի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ կոմիտեն ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների և պետական շահերի պաշտպանության լիազորությունների շրջանակում բռնագանձված գույքերի հաշվառումն իրականացնում է համատեղ և չունի առանձնացված վիճակագրություն:

«Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներն ընդգծում են թափանցիկության ապահովման անհրաժեշտությունը, սակայն այս սկզբունքի գործնական իրականացումը մնում է հռչակագրային: Մասնավորապես, օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետով

<sup>30</sup> Պետական գույքի կառավարման կոմիտե, <https://www.stateproperty.am/page/48> (դիտված՝ 09.02.2026)

<sup>31</sup> Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացի արդյունքում պետությանը վերադարձված գույքի վերաբերյալ ցանկ, [https://www.stateproperty.am/storage/pages\\_content/pages\\_content\\_461\\_4601291535.pdf](https://www.stateproperty.am/storage/pages_content/pages_content_461_4601291535.pdf) (դիտված՝ 09.02.2026)

Կառավարությունը հաստատում է պետական գույքի վերաբերյալ տեղեկություն տրամադրելու կարգը և տեղեկանքի ձևերը, սակայն այս կարգերը չեն ապահովում համակարգային թափանցիկություն, քանի որ տեղեկություն տրամադրվում է միայն գրավոր դիմումի հիման վրա: Օրենքի 7-րդ հոդվածի 15-րդ կետով կոմիտեն իրականացնում է աճուրդներ և մրցույթներ, և արդեն իսկ գործարկվել է պետական գույքի էլեկտրոնային աճուրդների կայքը (e-auctions.am), սակայն չի հրապարակվում, թե արդեն իսկ օտարված կամ ներկայում ընթացիկ աճուրդների տակ գտնվող գույքերից որոնք են վերադարձվել ապօրինի գույքի բռնագանձման շրջանակում, կամ թե օտարման արդյունքում գույքն ում է օտարվել: Թեև վերը նշված հոդվածներով ՀՀ կառավարության և պետական գույքի կառավարման կոմիտեի լիազորությունները բավականին ընդգրկուն են, դրանց չեն հետևում համապատասխան հանրային հաշվետվողականության, թափանցիկության և վերահսկողության մեխանիզմներ:

Ո՛չ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքը, և ո՛չ «Պետական գույքի կառավարման մասին» օրենքը չեն նախատեսում որևէ կարգավորում, որը հնարավորություն կտար շահագրգիռ հանրության ներկայացուցիչներին կամ որևէ այլ արտաքին դերակատարների մասնակցել որոշումների կայացման (օրինակ՝ կառավարման ծրագրերի քննարկում) գործընթացին, ունենալ խորհրդակցական կարգավիճակ որոշումների կայացման փուլերում, դիտարկել աճուրդները կամ կառավարման մրցույթները:

Գույքի կառավարման թափանցիկության և հաշվետվողականության իսպառ բացակայությունը նվազեցնում է պետական գույքի կառավարման քաղաքական օրինականությունն ու վտանգում հանրային վստահությունը գործընթացների նկատմամբ: ԶԻԿ-ների և ՉԼՍ-ների ներգրավվածության միակ ձևը մնում է փաստահավաք, հետաքննչական կամ լրագրողական աշխատանքը, որն էլ հաճախ խոչընդոտվում է տվյալների մուտքի սահմանափակումներով և ոչ հրապարակային տեղեկատվությամբ կամ առկա տվյալների ամբողջականության բացակայությամբ:

Գործող քաղաքականությունը, որը սահմանափակում է հանրային շահի առաջնահերթության իրականացումը և չի ապահովում բավարար թափանցիկություն, բարձրացնում է ազդեցիկ շահերի կողմից մանիպուլյացիայի վտանգը, ինչպես նաև խաթարում է հանրային վստահությունը վերադարձված ապօրինի ակտիվների արդյունավետ օգտագործման նկատմամբ:

Միջազգային լավագույն փորձը հուշում է, որ բռնագանձված գույքի կառավարումն առավել արդյունավետ է, երբ այն իրականացվում է հանրային վերահսկողությամբ, հաշվետու մեխանիզմների, քաղաքացիական մասնակցության և հստակ իրավական ընթացակարգերի ապահովմամբ:

## ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտության արդյունքում վերհանված խնդիրների հասցեագրման նպատակով մշակվել են հետևյալ առաջարկությունները՝

### Ինստիտուցիոնալ շրջանակ

1. Ստեղծել բռնագանձված ակտիվների կառավարման առանձնացված մարմին կամ, առնվազն, առանձնացված ստորաբաժանում Պետական գույքի կառավարման կոմիտեում, որը կմիավորի բռնագանձված/սառեցված ակտիվների հաշվառումը, պահպանումը, գնահատումը, ժամանակավոր և մշտական տնօրինումը:
2. Մասնագիտացված մարմնի կամ ստորաբաժանման, ինչպես նաև մասնագիտացված հավատարմագրային կառավարիչների համար ստեղծել իրավական բազա, նաև ապահովել անհրաժեշտ նյութատեխնիկական և մարդկային ռեսուրսով, վերապատրաստման ծրագրերով, մեթոդական ուղեցույցներով:
3. Հիմնել «Ակտիվների վերականգնման հատուկ ֆոնդ», այն է՝ իրացումից ստացված եկամուտների առանձնացված ֆոնդ կառավարման ծախսերի, պահպանման, ապահովագրության, կարողությունների զարգացման ֆինանսավորման համար:

### Կառավարման ընթացակարգեր

4. Ներդնել «խելամիտ բռնագանձման» (*smart confiscation*) չափորոշիչներ՝ նախատեսելով, որ ապահովման միջոց կամ բռնագանձում կիրառելուց առաջ իրականացվի ակտիվի ամբողջական գնահատում՝ ներառյալ դրա արժեքը, պահպանման ծախսերը, ինչպես նաև իրավական և օպերացիոն ռիսկերը, ինչն անհրաժեշտ է զրոյական կամ բացասական արժեք ունեցող ակտիվների բռնագանձումը բացառելու և պետական ռեսուրսները արդյունավետ օգտագործելու համար:
5. Սահմանել «արագ արձագանքման» ընթացակարգ (*interlocutory sale fast-track*), այսինքն՝ արագ իրացման հատուկ ռեժիմ արագ արժեզրկվող/ծախսատար ակտիվների համար (ավտոմեքենա, էլեկտրոնիկա, կենդանի ակտիվներ, փչացող ապրանքներ) դատարանի կողմից նախնական թույլտվության արագացված ընթացակարգով՝ սահմանելով հստակ ժամկետներ, պատասխանատու օղակ, օրինակելի որոշման/պայմանագրի ձևեր:
6. Սահմանել օպերատիվ ժամկետներ, այն է՝ ժամկետային կառավարման կանոններ՝ ապահովման միջոցից մինչև կառավարչի նշանակում, նախնական վաճառքի որոշումից մինչև իրացում, հաշվետվությունից մինչև հրապարակում:
7. Վարել հստակ վիճակագրություն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների շրջանակում բռնագանձված գույքերի և դրամական միջոցների չափի և դրանց հետագա ճակատագրի վերաբերյալ:
8. Բռնագանձված գույքի օտարումը նախկին սեփականատիրոջը կամ նրա հետ փոխկապակցված անձանց թույլատրել միայն որպես վերջին միջոց (*ultima ratio*)՝

բացառապես այն դեպքում, երբ առկա են բավարար փաստաթղթավորված հիմքեր, որ սպառվել են գույքի հանրային/սոցիալական վերօգտագործման և բաց մրցակցային աճուրդով իրացման բոլոր իրական հնարավորությունները, իրականացվել է շահառուի ու փոխկապակցվածության ստուգում և ապահովվել է ուժեղացված թափանցիկություն և անկախ վերահսկողություն:

### **Թափանցիկություն և հաշվետվողականություն**

9. Սահմանել տարեկան և կիսամյակային հաշվետվողականության համակարգ:
10. Գործարկել բաց տվյալների/հաշվետվությունների պորտալ, որը կներառի «ակտիվների քարտեզ» իրական ժամանակով, որում կարտացոլվեն գույքի կատեգորիաները, արժեքները, պահպանման ծախսերը, միջանկյալ որոշումները, իրացումների արդյունքները, շահառուները:
11. Սահմանել միջգերատեսչական համագործակցության և միջազգային փոխօգնության գործնական մեխանիզմներ:
12. Սահմանել խորհրդակցական և դիտորդական մեխանիզմներ քաղաքացիական հասարակության և տեղական ինքնակառավարման մարմինների ներգրավմամբ ապօրինի գույքի վերականգնման տարբեր գործընթացներում, այդ թվում՝ ռազմավարության և սեկտորային քարտեզի մշակման, գույքի վերադարձի, կառավարման, խոշոր իրացումների և սոցիալական հատկացումների որոշումներում, աճուրդների ու մրցույթների փուլերում ներդրում ունենալու ընթացակարգերով, ինչը կնպաստի գործընթացների թափանցիկությանը և վստահության բարձրացմանը:

### **Հանրային շահի ապահովում**

13. Պետական գույքի կառավարման նպատակներում օրենսդրությամբ որպես ինքնուրույն նպատակներ ամրագրել «բռնագանձված ակտիվների սոցիալական վերօգտագործման առաջնայնություն»-ը և «հանրային շահի գերակայությունը»-ը:
14. Օրենքով սահմանել բռնագանձվող գույքի օգտագործման առաջնահերթ ուղղությունները՝ կրթություն, առողջապահություն, համայնքային ենթակառուցվածքներ, երիտասարդական ծրագրեր, տուժողների աջակցություն և այլն:
15. Սահմանել սոցիալական վերօգտագործման հնարավորություն, մեթոդաբանություն և գնահատման չափանիշների համակարգ, որը թույլ կտա փաստարկված կերպով, պահպանման ծախսերի, արժեքի պահպանման, ռիսկերի և ակնկալվող սոցիալական ազդեցության համադրությամբ որոշել՝ տվյալ ակտիվը ենթակա է սոցիալական օգտագործման, թե՛ օտարման:
16. Սահմանել սոցիալական վերօգտագործման հատուկ ռեժիմ, օրինակ՝ ուղիղ հատկացում կամ արտոնյալ վարձակալություն համայնքներին, կրթական-առողջապահական հաստատություններին և հասարակական կազմակերպություններին՝ մրցութային, բայց ոչ աճուրդային ընթացակարգով:

17. Սոցիալական վերօգտագործման անհնարինության պարագայում օտարման մեթոդն ընտրելու դեպքում նախատեսել օտարումից ստացված դրամական միջոցների նպատակային ուղղորդում դեպի հանրային շահի ապահովմանն ուղղված ծրագրեր՝ բացառելով ստացված գումարի լուծվելն ընդհանուր բյուջետային հոսքի մեջ և ապահովելով հանրային վերադարձի տրամաբանությունը:
18. Կազմել ոլորտային քարտեզ (sector mapping) պետական կամ համայնքային մարմինների կողմից կարիքների նախնական վերհանման ու ամրագրման մեխանիզմներով՝ ուղղորդելու սոցիալական վերօգտագործումը և հանրային շահի ապահովումը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

### ՀՀ իրավական ակտեր

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 17.06.1998
2. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք, 05.05.1998
3. «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենք, 20.11.2014
4. «Հաշվեթևի պալատի մասին» ՀՀ օրենք, 16.01.2018
5. «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018
6. «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018
7. «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենք, 16.04.2020
8. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, 24.03.2021
9. ՀՀ կառավարության 2020 թ. դեկտեմբերի 17-ի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի ընթացքում պետության տիրապետությանը հանձնված գույքի հավատարմագրային կառավարման համար մրցույթ անցկացնելու կարգը և հավատարմագրային կառավարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին» թիվ 2066-Ն որոշում»
10. ՀՀ կառավարության կողմից 2023 թվականին հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 1871-Լ որոշում

### ՀՀ պաշտոնական կայքեր

11. ՀՀ դատախազություն, <https://prosecutor.am>
12. ՀՀ կառավարություն, <https://gov.am>
13. ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե, <https://www.stateproperty.am/>
14. ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեի էլեկտրոնային աճուրդների պաշտոնական կայք, <https://www.e-auctions.am>

### Միջազգային փաստաթղթեր, զեկույցներ, հետազոտություններ

15. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, 31.10.2003
16. Agency for the Management and Recovery of Seized and Confiscated Assets, <https://agrasc.gouv.fr/en>
17. Asset Recovery and Management Agency, <https://arma.gov.ua/en>
18. British Columbia Civil Forfeiture Office, <https://www2.gov.bc.ca/gov/content/safety/crime-prevention/civil-forfeiture-office>
19. Gleiss Lutz, New Regulations on Confiscations Orders and Asset Recovery in Criminal Law, 2017, <https://shorturl.at/4ofjF>
20. Greenberg Theodore S. et al., Management of Returned Assets: A Good Practices Guide for Non-Conviction Based Asset Forfeiture, The World Bank, 2009, <https://shorturl.at/W0aSc>
21. Italian Law N109 from 07.03.1996 on Provisions Regarding the Management and Disposal of Seized or Confiscated Assets, <https://shorturl.at/Ykb3c>
22. Italian Legislative Decree No. 159 from 06.09.2011 (Antimafia Code), <https://shorturl.at/2Ytmy>
23. Libera, The Practices of Social Reuse of Confiscated Assets from Mafias: Numbers, Experiences and Proposals, 2024, <https://www.libera.it/documenti/schede/raccontiamo-il-bene-pubb-en.pdf>

24. Maldita.es, From crime to community: the social reuse of confiscated assets in Italy, Spain and Romania, 2024, <https://maldita.es/malditodato/20240930/reuse-confiscated-assets-italy-spain-romania>
25. Ministry of Justice and Security of the Netherlands, Asset Recovery Guide The Netherlands, 2024, <https://shorturl.at/vntMk>
26. National Agency for the Management of Seized Assets, <https://anabi.just.ro/en>
27. Office for Asset Recovery and Management, <https://www.mjusticia.gob.es/en/areas-actuacion/oficina-recuperacion-gestion>
28. Partners Albania for Change and Development, Social Reuse of Confiscated Assets from Organized Crime and Corruption by CSOs with an Increased Role of Local Government, 2024, <https://shorturl.at/wqKSJ>
29. The Department of Justice Criminal Division, Asset Forfeiture Program, <https://www.justice.gov/criminal/criminal-mnf/equitable-sharing-program>
30. The European Parliament and of the EU Council, Directive 2014/42/EU of 3 April 2014 on the freezing and confiscation of instrumentalities and proceeds of crime in the European Union, <https://eur-lex.europa.eu/eli/dir/2014/42/oj/eng>
31. The European Parliament and of the EU Council, Directive 2024/1260 of 24 April 2024 on asset recovery and confiscation, <https://eur-lex.europa.eu/eli/dir/2024/1260/oj/eng>
32. The Financial Action Task Force, Best Practices on Confiscation (Recommendations 4 and 38) and a Framework for Ongoing Work on Asset Recovery, 2012, <https://shorturl.at/iuDqB>
33. The Financial Action Task Force, Methodology for Assessing Technical Compliance with the FATF Recommendations and the Effectiveness of AML/CFT Systems, 2023, <https://shorturl.at/pDCnh>
34. The World Bank Stolen Assets Recovery (StAR) Initiative, <https://shorturl.at/gePui>
35. Vettori B., Misoski B., Social Reuse of Confiscated Assets in the EU, <https://shorturl.at/abQmw>
36. UN Interregional Crime and Justice Research Institute, The Social Re-use of Seized and Confiscated Assets: Good Policies and Practices, 2025, <https://shorturl.at/AL8Fh>